



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Կէստան Յարտէր Կ. Ս.

ԹԻՒ 63

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԱՐԻԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

## Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՎԱԹՍՈՒՆԸԿԻՆԳԵՐՈՐԴ

24 օգոստոս 1873



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՄԻԻԿԷՆՏԻԱՆՆԵՆ

— 1873 —

ՔՆՈՒՄԵՐ ԳՆԱԿԱՅԻՆ ԳՆԱԿԱՅԻՆ

ԲԵՅՈՒՄ 1870 ՅՄԻՆ

ՆԻՍՏ ԿԵ .

24 ՕԳՈՍՏՈՍ 1873

ՆԱԽԱԳԱՀ . — ՍՐԲՍԶԱՆ ՊՈՏՐԻՍՐԻՔ (Բացակայ)  
ԱՏԵՆԱՊԵՏ . — ՏԱՏԵՍՆ Յ . ԷՅԷՆՏԻ (Ա . Ատենապետ)

Ժամը 7 ին Ատենը բացուեցաւ 'ի ներ-  
կայութեան մեծադոյն մասին Երեսփոխանաց ,  
որոց վերջին թիւը 79 ի հասաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Օգոստոս 3 նախըն-  
թաց արտաքոյ կարգի նիստին մէջ թէ՛ Ազգ .  
Երեսփոխանք եւ թէ՛ հանդիսաանս ժողովուրդն  
իրենց արդարատէր զգացմանցն ու օրինասիրու-  
թեան այնքան մեծ ապացոյցներ տուին , որ  
պարտաւորութիւն կը համարիմ իրենց գովելի  
ընթացքին համար հանդիսապէս իմ մեծարանքս  
նուիրել . ուստի եւ աւելորդ կը դատիմ նա-  
խընթաց նիստին մէջ ըրած յորդորներս նորէն  
կրկնել այսօր թէ՛ Ազգային Երեսփոխանաց եւ  
թէ՛ հանդիսական ժողովրդեան , քաջ դիտնա-  
լով որ ամենն ալ միեւնոյն զգացմամբ եւ ա-  
ռանց կրից ու կողմնակալութեան Ազգին օ-  
գուան իրենց նպատակ ունենալով պիտի ջա-  
նան ազգային պատիւն անարատ պահել թէ՛ Տէ-  
րութեան եւ թէ՛ օտար ազգաց առջեւ :

ՎԱԿԱՐԱՐՈՒՄ ՆԱԽԸՆԹԱՅ ԿԻ . ՆԻՍՏԻ  
ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ :

Նախընթաց ԿԻ . նիստի Ատենադրութիւ-  
նը ժողովոյն վաւերացման գրուելու առթիւ  
հեռուեալ դիտողութիւններն եղան :

ԻՕՃԱՍԱՐԵԱՆ Օ . ԷՅ . — Ատենադրութեան  
909 կրկին Ա . սիւնակին մէջ գրուած է թէ

գրաւոր առաջարկութիւնն ստորագրող 'Երես-  
փոխաններն իրենց առաջարկութեան Բ . մասն  
ետ առջն : Ատի շխալ է . չէ թէ ետ առինք ,  
այլ ետ թողուցինք : Նաեւ 899 երեսին մէջ  
յիշուած ժողովրդական երկու հանրագիրներուն  
ստորագրութեանց թիւերը չեն նշանակուած ,  
զորս նշանակել պէտք էր . վասն զի այն օր եր-  
կու հանրագիրներէն մէկուն համար դիւանը  
յայտնեց թէ չորս հազար ստորագրութիւն՝ կը  
կրէ . իսկ քանի մի օրէն ետեւ լուեցաւ թէ  
հազարի չափ ստորագրութիւն ունի . ասոնց  
օրն է ճշմարիտը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Նախընթաց նիստին 2 հան-  
րագրութիւն մատուցուեցան դիւանին ձեր ա-  
չաց առջեւ , եւ ստորագրութիւնները համրուե-  
լու համար դիւանադպիրներէն մէկուն արուե-  
ցան . դիւանն ինչ թիւ որ լսեց նոյնը իմացուց  
ժողովին . սակայն կերեւի թէ սխալ համրուե-  
ր է , եւ այս սխալն ալ նոյն միջոցին գործի սկը-  
սելու համար եղած շտապման արգիւնքն ըլլա-  
լով մեծ պակասութիւն պէտք չէ համարիլ .  
այսու ամենայնիւ կրնայ նորէն համրուիլ եւ  
ուղիթ թիւը նշանակուիլ այսօրուան Ատենադ-  
րութեան մէջ , որ կարեւորութիւն չունի ըստ  
իս :

ՄԷՐԵԷՄ—ԳՈՒՂԻ Յ . ԷՅ . — Նախ կը փա-  
փաքիմ որ դիւանը բարեհաճի հասկըցնել մեզ

Թէ կարգը վերջընթեր ԿԳ. նիստի Ատենադ-  
րութեան վաւերացմանն ըլլալով, ինչու զայն  
դիտողութեան չնկարայացուցած ԿԳ. նիստին  
Ատենադրութիւնը յառաջ կանոնէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներկայ նիստը նա-  
խընթացին հետ մեծ կապակցութիւն ունենա-  
լով եւ անոր շարունակութիւնը համարուելով  
դիւանը պատշաճագոյն դատեց նախընթաց նիս-  
տին Ատենադրութեան առաջնութիւն տալ եւ  
վերջընթեր նիստինը ետ թողուլ, ինչպէս անց-  
եալ անգամ ալ ետ թողուեցաւ :

ՄԵՐԵԷՄ—ԳՈՒՂԻ Յ. ԷՖ. — Գալով ժողո-  
վրդային հանրագիրներուն, երբ նախընթաց  
նստին Գիւանը զանոնք ժողովին ներկայացուց,  
Ատենապետ ԷՖ. ծանոյց թէ չորս հազար ստո-  
րագրութիւն կը կրեն. նոյն միջոցին ձայն մ'ե-  
լաւ, չդիտեմ ուսկից, թէ ստորագրութեանց  
թիւը 4000 եւ այսքան է : Այն ատեն Ատենա-  
պետ ԷՖ. յայտնեց թէ մինչև 4000 ը միայն  
թուագրեալ ըլլալով մնացելոց թիւը յայտնի  
չէր : Այս խօսքերը խիստ լաւ կը յիշեմ : Յետոյ  
լսեցինք թէ հանրագիրները ծայրատուեր են  
ստորագրութեանց թիւը պակսեցնելու դիտ-  
մամբ : Եւ որովհետեւ հիմա 4000 եւ այսքանի  
խօսք կը լլայ, 4000 եւ այսքանին ու հազար  
եւ այսքանին մէջ այնչափ մեծ տարբերութիւն  
կայ որ սխալ համարուած ըլլալու պատճառը բա-  
ւական յթուիր մեզ դայթակզեալ մտքերը հան-  
դարտեցնելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ մասին պէտք ե-  
զած պատասխանը տուի արդէն :

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Օգտէն ԷՖ. կրէ թէ  
նախորդ նստին 17 Երեսփոխանաց առաջարկու-  
թեան Բ. մասը ետ չառնուեցաւ : Կը հարցնեմ  
թէ ինք իր կողմէ միայն, թէ ոչ միւսներուն  
կողմէ փոխանորդարար կը խօսի զայդ. ընդհա-  
կառակն մեք զխտեմք որ առաջարկութեան այն  
մասը ժխտուեցաւ եւ Ատենադրութեան մէջ  
ճիշդ արձանագրուած է այդ կէտը : Օգտէն ԷՖ. ի  
դիտողութիւնը կարեւորութեան կերպարանք  
չտոնելու համար պէտք է ճշդուի թէ ինք իր  
կողմէ միայն կը խօսի թէ ոչ 17 Երեսփոխա-  
նաց կողմէ :

ԻՓԵՎՃԵԱՆ Է. ԷՖ. — Ատենադրութեան

903 Երեսին Բ. սխանակին մէջ նշանակեալ սա-  
խօսքս « Եթէ ձեզ հաճելի չեն այս խօսքերս  
կրնաք ականջնիդ խցել չլսելու համար » Պէկ-  
եան ԷՖ. ին ուղղուած չէր, հապա ուրիշ Ե-  
րեսփոխանի մը՝ որ անպատեհ եղանակաւ ընդ-  
միջած էր նոյն միջոցին իմ խօսքս : Իսկ ժողո-  
վրդական հանրագրութեան ստորագրութեանց  
թուոյն մասին Մէրեւէմ—Գուղի ԷՖ. ին հետ  
ձայնակից եմ թէ պէտք է ճշդուի :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Մենք ուզած ենք  
մեր առաջարկութեան Բ. մասն ետքի թողուլ,  
Պէկեան ԷՖ. ի վկայութեանը հարկ չկայ. Ե-  
րեսփոխանք կրնան վկայել :

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Օգտէն ԷՖ. ժողո-  
վին մէկ որոշումն եղծել կուզէ. 17 Երեսփո-  
խանաց առաջարկութեան Բ. մասը նոյն օ-  
րըն ետ առնուեցաւ, ըսել է ջնջուեցաւ. եթէ  
իւր նպատակն է ջնջուած եւ մերժուած ա-  
ռաջարկութիւնը նորէն կրկնել, կրնայ ընել  
զայդ. բայց ոչ այսպիսի ձևով մը. ապա թէ  
ոչ ժխտուած է այն եւ արձանագրութիւնն ալ  
ճիշդ է : Ուրիշ բան է թէ որ Օգտէն ԷՖ. նոր  
խնդիր մը կուզէ յարուցանել :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Խ. ԷՖ. — Առաջարկողաց  
մին եւ էի. ետ ձգեցինք, բայց ետ չառնինք :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ. — Ես էի այն Ե-  
րեսփոխանը՝ որ Իփէկեան ԷՖ. ի դէմ բողո-  
քեցի նոյն օր իւր խօսքն ընդմիջելով, երբ նա  
յանուէն Սահմանագրութեան խօսող Երեսփո-  
խանները կը կշտամբեր :

ԻՓԵՎՃԵԱՆ Է. ԷՖ. — Իմ կշտամբանքս  
անոնց միայն կը վերաբերէր՝ որք Սահմանագ-  
րութիւնն իրրեւ պատրուակ կը գործածեն :

ԻԻՓԻՒՃԵԱՆ Կ. ԷՖ. — 17 Երեսփոխա-  
նաց առաջարկութեան Բ. մասն ետ առնուած  
չըլլալուն ապացոյցը կը տեսնուի ստենագրու-  
թեան միւսնոյն Երեսին մէջ, յորում քիչ մը  
վարը բացատրուած է սապէս. Ե-ր մը յոյնէր  
— Մի-նն — Է-ր յոյնէր — :

Ատենադրութիւն ընող չըլլալով նա-  
խընթաց ԿԳ. նստի Ատենադրութիւնը քուէի  
կը դրուի եւ միաձայն հաւանութեամբ կը վա-  
ւերացուի :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ  
ՆԱՄԱԿ ՄԸ ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԱՐՔԷՆ

Ատենապետ ԷՖ. կը ծանուցանէ թէ Ընդ-  
հանուր ժողովոյ որոշման համեմատ քննիչ Յանձ-  
նաժողովն, որ 8 օրէն իւր տեղեկագիրը բերե-  
լու համար կազմուած էր, չը կրնալով որոշեալ  
պայմանաժամին մէջ իւր պաշտօնն աւարտել  
յառաջնում գումարմանն անմիջապէս նամակաւ  
մը խնդրած էր Ընդհանուր ժողովոյ դիւանէն  
Երկարաձիկ ժողովոյն յաջորդ նիստը, ուր 18  
օր սպասել հարկ եղաւ, եւ անա այս ան-  
գամ իւր տեղեկագիրը բերած է, եւ ժողովը  
կը պարտաւորի այսօր նոյն տեղեկագրի խնդ-  
րովն զբաղիլ. սակայն դիւանն այս խնդրոյն  
ձեռնարկելէ առաջ հարկ կը դատի քանի մի  
գրութիւններ եւ հանրագրեր զորս այսօր ըն-  
դունած է, ժողովին ներկայացնել, եւ եթէ  
ժողովը պատշաճ դատէ նախ զանոնք կարգալ  
եւ ապա օրուան խնդրոյն այն է Տեղեկագրի  
ընթերցմանն անցնիլ :

Քանի մը Երեսփոխանաց առաջարկու-  
թեան վրայ կորոշուի նախ ժողովրդային հան-  
րայիրներն՝ որ քանի մը տեսակ էին, կարգալ,  
որոց առթիւ Ատենապետ ԷՖ. նորէն կը յիշե-  
ցնէ թէ ժողովն այնպիսի հանրագիրներէ եր-  
բէք ներշնչուելու չէ, այլ ծանօթութիւն եւ  
եթ առնելէ ետեւ արդարութեան եւ օրինաց  
համաձայն պէտք եղած անօրէնութիւնն ընե-  
լու է :

Ահաւասիկ կարգացուած հանրագիրները,  
որոնց օրինակները զանազան թղթերու վրայ  
սպագրուած եւ չըջաբերութեամբ ստորագրել  
արուած էին :

ԱՌՎՍԵՄԱՆՈՂ ԱՋԴ. ԵՐԵՍՓՈՒՄՆԱԿԱՆ  
ԺՈՂՈՎ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՆ

Ամբողջ տասը տարի եղաւ որ մեր  
Բարեխնամ կառավարութիւնը զվզեա-  
լին Սահմանագրութիւնը վաւերացու-  
ցած եւ յանձնած է Ազգային : Այս տասը  
տարուան շրջանին մէջ շատ մը փոփո-  
խութիւններ եղան եւ անժամանակ դար-

րեցաւ Սահմանագրութիւնը : Ուր ուրե-  
մն ժողովուրդին փափաքանօքը վերջու-  
տին եկաւ Սահմանագրութիւնը եւ սահ-  
մանագրապէս Պատրիարքի ընտրութիւն  
կատարուեցաւ 1865 ին. Անկէ մինչև  
ցարդ Երեսփոխանական Պատկառելի  
ժողովը իր օրինաւոր նիստերը կը շարու-  
նակէ եւ ազգային այլ եւ այլ պատահական  
մեծ խնդիրներով դբաղեցէ զատ, Սահմա-  
նագրութեան քանի մը արամագրու-  
թեանց վերաքննութեան ստիպողակա-  
նութիւնը տեսնելով զայն կատարած եւ  
անոր գործադրութիւնն հրամայած եւ  
յանձնած է Ազգային Վարչութեան Սահ-  
մանագրութիւնը անթերի գործադրելու  
համար, իսկ միւս կողմէն Սահմանագրու-  
թիւնը վերաքննելու համար հմուտ եւ  
փորձառու անձերէ Յանձնաժողով մ'ալ  
կազմած է :

Ժողովուրդը մեծ շնորհակալութիւն  
կը յայտնէ Երեսփոխանական Պատկառելի  
ժողովոյդ իր այս օրինական ընթացքին  
համար. բայց ցու. կը յայտնէ վերջին  
անգամ Ազգային օրինաւոր Վարչու-  
թեան դէմ եղած մասնաւոր ցոյցերուն  
եւ մանաւանդ Ընդհանուր ժողովոյ վեր-  
ջին նիստին մէջ Երեսփոխանաց ոմանց  
Սահմանագրութեան դէմ ըրած ակնաւր-  
կութեանց վրայ :

Ուստի ներկայիւս պարտք կը համա-  
րիմք յայտարարել Երեսփոխանական  
Պատկառելի ժողովոյդ թէ ժողովուրդը  
Սահմանագրութեան անթերի գործադրութիւնը կը  
պահանջէ եւ եթէ գործադրութեան մէջ  
արգելք մը կամ դժուարութիւն մը կայ,  
գարձեալ Երեսփոխանական ժողովը փոյն իւր-  
նայ այդ արգելքը կամ դժուարութիւնը  
տեսնել եւ բաւեալ եւ բաւայնմ հրամա-  
յել Ազգային Վարչութեան նոյնը գոր-  
ծադրելու համար : Այս օրինական ըն-  
թացքէն դուրս ո եւ է միջոց աններելի  
է եւ այս օրինական ընթացքին պարտա-

կան են հետեւիլ, Պատրիարք, Երեւոյս խան և վարչութիւն :

Ար խնդրեմք Երեւոյս խանական Պատրիարքի ժողովէր որ բարեհաճիսոյն յայտարարութիւնը ու շաղարու թեան առնուի և զԱզգն անիշխանութենէ ազատ պահելու իմաստութիւնն ունենալով, Սահմանադրութիւնը նոր գործադրուիլ սկսած վայրկենին անոր խոչընդոտները բառնալու շնորհն ընել, որով Ազգին բարօրութեանը ու յառաջադիմութեանը իրապէս պատճառ կըլլայ :

Ի մի բան Երեւոյս խան էֆէնտիներ, Ազգը ձեզմէ ոչ այլ ինչ կ'սպասէ, եթէ ոչ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ և ԱՆՈՐ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ :

8 Օգոստոս 1873 Ստորագրութիւնք

ՎՍԵՄԱՇՈՒՒՄ ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖԷՆՏԻ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

Մեր ստորագրեալքս, ժողովուրդ Հայոց, կը բողոքենք Քաղաքական Ժողովոյ դէմ որ իւր անփորձութեամբն ու ապիկարութեամբը յԱրքունուստ Ազգին շնորհուած դարաւոր մէկ քանի իրաւունքներն ու արտօնութիւնները վտանգի են թարկեց :

Ար բողոքեմք Քաղաքական Ժողովոյ դէմ, որ իւր անզգայն, անխոհեմ և անհեռապես ընթացքովը, թէ Քաւառաց և թէ Պոլսոյ թաղերուն մէջ, անսպառ խռովութիւն և դժտութիւն յարուցանելու առիթ ու պատճառ եղաւ :

Ար բողոքեմք Քաղաքական Ժողովոյ դէմ, որ իւր ըրած մէկ քանի անարդար և անիրաւ սրոյնամբքը՝ Ազգային իշխանութեան ու ժը նոյն իսկ Ազգին առջև սկարացնելու պատճառ եղաւ, Սահմանադրութիւնն իւր ձեռքը գործիք ու խաղալիք ընելով :

Ար բողոքեմք Քաղաքական Ժողովոյ դէմ, որոյ անդամներէն ոմանք, իրենց պաշտօնավարութեան միջոցին, ժողովուրդը Սրբազան Պատրիարքին դէմ գրգռելու ճիգեր ու փորձեր ըրին, և իրենց կըքոտ ու անհանդարտ բնաւորութեամբ նոյն իսկ Ազգային Ժողովոյն խորհրդարանը կուռ պայարէզ դարձնելով, Ժողովին պատկառանքը կորուսին :

Ար բողոքեմք Քաղաքական Ժողովոյ դէմ, որ Սահմանադրութեան և Ժողովրդականութեան դիմակին ներքեւ ճընշում ու բռնութիւն բանեցուց :

Ար բողոքեմք Քաղաքական Ժողովոյ անդամոց ոմանց դէմ, որ Յուլիս 31 ի օրը զՄշեցի բրօք Պատրիարքարան բերելով, կուռ ու անկարգութիւններ գործել տուին, որով վարչական իշխանութիւնն անպատուեցաւ :

Ար բողոքեմք Քաղաքական Ժողովոյ անդամոց ոմանց դէմ, որ նստած ելած տեղերնին Սրբազան Պատրիարքին նկատմամբ ծանր հայհոյութիւններ ու նախատական խօսքեր ըրած են՝ նոյն իսկ մէկ երկու լրագրաց մէջ ալ վատահամբաւիչ յօդուածներ տպել տալով :

Ար բողոքեմք Քաղաքական Ժողովոյ այն վեց անդամոց դէմ, որ իրենց գործած անկարգութիւններն և անարդարանալի զեղծումները ծածկելու համար կ'ամբաստանեն զՍրբազան Պատրիարքը՝ իւր հրաժարմանէն յետոյ, մինչդեռ կրնայ Նորին Սրբազնութեան և իրենց պաշտօնավարութեան միջոցին օրինաւորապէս ամբաստանել զայն՝ եթէ հիմնաւոր և արդար ամբաստանութիւններ ունէին :

Նկատելով որ այս ամեն չարեաց պատճառք միայն իզմիրլեան Մատթէոս վարդապետ, Ք. Ղազարոսեան և Ս. Փափաղեան էֆէնտիններն են, և նկատելով որ Սրբազան Պատրիարքը կը հրաժարի իւր ըրած մէկ քանի կարեւոր առաջարկութիւնները Քաղաքական Ժողովէն և վե-

րաքննիչ Յանձնաժողովէն չ'ընդունուելուն համար, առաջարկութիւնք՝ որ օդտակար են Ազգին և Սահմանադրութեան օգուտն իսկական պահանջմանքը :

Ուստի կը խնդրեմք որ

1. Մեր սիրելի Հայրիկին հրաժարականը չ'ընդունուի :

2. Նորին Սրբազնութեան Ազգուստ առաջարկութիւնները պատկառելի ժողովէր ու շաղարութեան առնուին :

3. Սահմանադրութեան վերաբնութիւնը փութացուի :

4. Քաղաքական Ժողովոյ հրաժարականն ընդունուի, և անոր տեղ հանձարեղ և ձեռնահաս Քաղաքական Ժողովը ընտրուի, որպէս զի Ազգին առջև բացուած անդունդը տեսնելով Ազգին իրաւունքներն ու արտօնութիւնները ամենայն խոհականութեամբ պաշտպանէ և ապահովէ Սահմանադրութիւնն ու Ազգին ապագան :

5. Իզմիրլեան Մատթէոս վարդապետ, Ք. Ղազարոսեան և Ս. Փափաղեան՝ զորս կ'ամբաստանեմք՝ որ այլ ևս Ազգային պաշտօն բնաւ չ'վարեն :

Հայոց ժողովուրդը, պատկառելի Ժողովոյդ իմաստութեան ու խոհեմութեանը վստահացած, յատուկ պատգամաւորութեան միջոցաւ նոյն հանրագիրն առ Ժողովը ներկայացնելով անոր անմիջական գործադրութիւնը կը խնդրէ :

Ստորագրութիւնք

Երրորդ հանրագիր մ'ալ կար Ղալաթիոյ Թաղեցոց կողմէ առանձին, որ Փափաղեան Ստեփան էֆ. ի թաղին մէջ վարած Ազգային պաշտօններուն դէմ կը բողոքէր, բայց նոյն Թաղի մասնաւոր խնդրոյ մը վերաբերեալ ըլլալը դիւանը ծանուցանելէ ետեւ, իբրեւ վարչութեան կողմէ անօրինելի խնդիր ամբողջ կարգացուիլը Ժողովն արժան չ'դատեց :

Յետոյ Սրբազան Պատրիարք Հօր կողմէ եկած նամակը կարդացուեցաւ, որոյ ահաւասիկ պատճէնը :

Վսեմաշուք Ատենապետ Ազգային Երեւոյս խանական Ժողովոյ

Օգոստոս 3 իմ հրաժարագիրս մատուցի (նոյնանուր Ժողովոյ Ատենին, ելի եւ մեկնեցայ :

Ատենաքան էֆէնտիններէն ոմանք իրենց գիտողութեան մէջ մեր հրաժարագրոյն մէկ պարբերութեան հարազատ իմաստն և ոգին ուղիղ չ'ըմբռնելով այլ ընդ այլոց միտքեր հաներ են, ինչպէս նկատեսցի վերջին նիստի Ատենադրութեան տպագրեալ տետրին մէջ. մեր հրաժարագրոյն մէկ պարբերութիւնն որ պատճառ տուած է թերի մեկնութեանց, այս է. « Ես զձեզ չ'ամբաստանեցի, այլ զրութիւնն ամբաստանեցի », զոր ուղղած եմ առ Քաղաքական Ժողովն :

Այս՝ զրութիւն մի ամբաստանեցի եւ կ'ամբաստանեմ հրապարակաւ առաջի Երեւոյս խանութեան և Ազգին. բայց միթէ՞ կարելի՞ է ասա՞ յոսի հետեւութիւն հանել ևս ասել թէ ասպ ուրեմն Պատրիարքը Սահմանադրական զրութիւնն ընդհանրապէս կ'ամբաստանէ, կամ թէ Ազգին Օրինադիրքն կ'ամբաստանէ, ևս այլն :

Ա՛յ, բնաւ այդպէս չէ. զի ես ներկա Սահմանադրութեան հիմնական օրէնքներն, անփոփոխելի սկզբունքներն և նորա բուն ոգին ժորք աշխարհիս ամեն Սահմանադրական ազգամ մէջ իբրեւ բացարձակ ճշմարտութիւն ընդունուած են, կը յարդեմ ևս կը պաշտեմ, ինչպէս որ բացայայտ կերպով խոստովանած եմ իմ հրաժարագրիս մէջ ևս իբրեւ կտակ աւանդած եմ իմ յաջորդիս :

Բայց թէ ինչ է մեր ամբաստանած զրութիւնն, ահաւասիկ կը կրկնեմ, ամեն տարակոյս փարատելու համար. թէ եւ արդէն տարակոյս թողած չէի իմ հրաժարագրիս մէջ :

Ես կ'ամբաստանեմ, այսինքն անկատար կը դատեմ այն զրութիւնն որ տակաւին կը հաւատան թէ ամբողջ ազգը կառավարելու համար բաւական և շատ են միմիայն կրօնական և Քաղաքական Ժողովներն և քանի մի Տեսուչ խորհուրդներն :

Ես կ'ամբաստանեմ, այսինքն անկատար կը դատեմ, ոչ թէ Սահմանադրական զրութիւնը այլ վարչական կազմակերպութեան եղանակն :

Ես կ'ամբաստանեմ, այսինքն անկատար կը դառնամ այն գրութիւնն, որով ծանրաբեռնուած է Գործադիր վարչութիւնն առանց օրինաւոր բաշխման աշխատութեանց:

Ես կ'ամբաստանեմ 'ի վերջոյ այն գրութիւնն, որով ուսանք կը խօսին, կը գրեն եւ կը պնդեն ունայն փաստերով, թէ կարելի է ներկայ Սահմանադրութիւնն կէտ առ կէտ ըստ տառին ճշտութեամբ գործադրել եւ վերաքննութեան պէտք չկայ: Այս կարծեաց առաջ ոչ միայն Պատրիարքը այլ եւ Ընդհանուր ժողովն ամբաստանուած կը համարուի, որ ինքնին փորձառութեամբ վերաքննութեան պէտքն զգալով յատկապէս Յանձնաժողով կազմած է, եւ արդէն ինչ ինչ յօդուածոց փոփոխութիւնն բրած է:

Ուրեմն իմ բուն փափաքս եւ բացարձակ յայտարարութիւնս եղած է ներկայ Սահմանադրութեան սահմանն աւելի ընդարձակել եւ աւելի կատարելագործել, Ազգի եւ Եկեղեցւոց բազմազիմի պիտոյից եւ պահանջմանց համեմատ:

Ահա՛ թէ ինչպէս խօսած եմ այս մասին իմ հրաժարագրիս մէջ, կը պարտաւորիմ երկրորդել:

Ա. Վերաքննութիւն Սահմանադրութեան:

Բ. Սահմանադրութեան իրաւանց եւ պարտուց հիմնական օրինաց որչափ կարելի է անվերէպ գործադրութիւն:

Գ. Վարչական կազմութեան մէջ աշխատութեանց բաժանումն:

Դ. Գործադիր իշխանութեան անդամոց միութիւնն եւ համաձայնութիւնն. առանց այս համեմատութեան վարչական մեքենայն չի շարժիր:

Արդ թէ եւ իմ հրաժարագրիս պարունակութիւնն բացարձակ կը բողոքէ ամեն թիւր ըմբռմանց եւ կարկառան մեկնութեանց դէմ, բայց որպէս զի նոյն մեկնութիւններն անպատասխանի չի մնան նախորդ նիստի ատենադրութեան մէջ, արժան համարեցի ուղղել զայս Ձեր Պատկառելի ատենիդ, յաջորդ ատենադրութեան մէջ արձանագրելու համար, որպէս չի հրաժարականիս Սահմանադրական անարատութիւնը պաշտպանուած ըլլայ սպազայի մէջ:

Մնամ աղօթարար համայն

Ազգիս միութեան եւ խաղաղութեան

1873 Օգոստոս 24

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԴՈՎՈՅ

Ատենապետ էֆ. կը հարցնէ Քննիչ Յանձնաժողովոյ Ատենապետ Տ. Խորէն Սրբազանին թէ ի՞նչ եղաւ Յանձնաժողովոյն աշխատանաց արդիւնքը եւ մէջէնին ո՞ր անձը տեղեկարար ընտրեցին: Խորէն Սրբազանը կը պատասխանէ թէ այն օրէն 'ի վեր որ պատիւ ունեցաւ Յանձնաժողովը Պատկառելի Ընդհանուր ժողովոյ որոշմամբն այսպիսի ծանր խնդրոյ մը քննութիւնն ստանձնել, Յանձնաժողովն աշխատեցաւ խղճի մտօք իւր պաշտօնը կատարել. սակայն չկրնալով զայն Տ օրուան մէջ լրացնել, այսօր կը բերէ իւր տեղեկագիրը, եւ տեղեկարար ընտրած է իւր Անդամներէն Օտեան էֆէնտին:

Ատենապետ էֆ. ի հրաւիրմանց համաձայն Օտեան էֆ. կընթեռնու Յանձնաժողովին Տեղեկագիրը, որոյ աւտարի պատճէնը:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀՕՐ

ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆՍՅ

ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԴՈՎՈՅ

ՆԵՐԿԱՅԱՅԵԱԼ ՅԱՏԵՆԻ ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԵՄՓՈՒԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

24 ՕԳՈՍՏՈՍ 1873

Տիարք Երեսփոխանք:

Տարւոյս Օգոստոսի 3րդ օրը դուժմարեալ Ազգային Երեսփոխանական ժողովը տեղեկանալով Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր հրաժարման, տեղեկանալով նաև Քաղաքական ժողովոյ հրաժարման որ նոյն օր ներկայացաւ եւ սոյն երկու հրաժարականները պատճառաբանեալ գտնելով, պատճառները քննելու պաշտօնով Քննիչ Յանձնաժողովս կարգեց հրաւիրելով որ ութ օրուան մէջ իր տեղեկագիրը պատրաստէ:

Քննիչ Յանձնաժողովը չը կրնալով իր պաշտօնը կատարել սրոշեալ պայմանաժառն, պարտաւորեցաւ ինքնին երկարելու պայմանաժամը, յուսալով հանդ պիլ, Տիարք Երեսփոխանք, ձեր ներօրոգամտութեան այսպիսի փափուկ խնդրոյ մը մէջ:

Այսօր իր պաշտօնը կատարած կը ներկայանայ Պատկառելի ժողովոյդ եւ կը ներկայացնէ իր աշխատութեան արդիւնքը:

Քննիչ Յանձնաժողովս՝ որպէս զի Ընդհանուր ժողովէդ առած պաշտօնը անսխալ կատարէ, ուղեց լաւ խելամուտ ըլլալ իր սրաշօ օճին բնութեանն ու սահմանին, եւ տեսաւ որ իր պաշտօնը չէ գատաստանի ենթարկեալ խնդրոյ մը վրայ պատրաստական քննութիւնը կատարել. Երեսփոխանական ժողովդ չըհաճեցաւ դատաւորի կերպարանը զգե՛նուլ այս խընդրոյն մէջ, զի եւ ոչ ոք գատաստան խընդրած էր: Ամբաստանութիւն չը կար ներկայացեալ եւ ոչ իսկ բողոք: Այլ երկու հրաժարական ներկայացեալ էր ժողովոյդ, մէկն Ազգային վարչութեան Սրբազան Նախագահին կողմէն, միւսը Քաղաքական ժողովին կողմէն: Սրբազան Պատրիարքն իր հրաժարականը կը պատճառաբանէր ըսելով թէ Ազգին վարչական գրութիւնը թերութիւններ ու մինչև անգամ անկարելութիւններ ունի. Քաղաքական ժողովն ալ իր հրաժարականը կը պատճառաբանէր ըսելով թէ Սրբազան Պատրիարքն ըստ ամենայնի Սահմանադրութեան երկու լի անկարելի լէ՛րտի: Այս պատճառները զիրար չէին վաներ, այլ մանաւանդ իրար կը շօշափէին: Ուրեմն Սրբազան Պատրիարքին ու Քաղաքական ժողովոյ մէջ անհամաձայնութիւն գոյացած էր Սահմանադրութեան գործադրութեան անհամաձայնութեան արձանագրութեանց սուլմաներուն մէջ կը գտնուի, զոր ցուցնել պատրաստ ենք:

զորս Սրբազան Պատրիարքը հասարակաց կարծեաց կը մատնէր իբրև անգործադրելի, եւ արդեօք կոյ բան մը ազգին վարչական գրութեանը մէջ որ զՎարչութիւնն անկարելի ընէ: Ասոնք քննել եւ իմանալ Ընդհանուր ժողովոյ պարտքն էր եւ այս քննութիւնը յանձնուած էր Քննիչ Յանձնաժողովիս: Ու սաի Յանձնաժողովս նախ եւ առաջ խնդրեց Քաղաքական ժողովէն որ գրով ճշդ եւ բերնով բացատրէ Սահմանադրութեան գործադրութեանը ներկայացուցած գանդատները: Քաղաքական ժողովը հեռակեայ գիրը ներկայացուց Յանձնաժողովիս:

Քերպատիւ Ատենապետ Սրբազան Քննիչ Յանձնաժողովոյ:

Պատուարժան Յանձնաժողովոյդ 7 Օգոստոս եւ 1 Թուահամար գրութիւնն ստացանք:

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր եւ հրաժարեալ Քաղաքական ժողովոյս մէջ անհամաձայնութեան տեղի տուող խնդիրը Սահմանադրութեան գործադրութիւնն ըլլալը արդէն յայտնի է. եւ այս ալ ոչ թէ Սահմանադրութեան բաւական խնդիր է, այլ որչոյն եւ սկզբանց խնդիր, ահա քանի մը օրինակներ տանք, որոնց մանրամասն բացատրութիւնն ամբողջ Վարչութեան արձանագրութեանց սուլմաներուն մէջ կը գտնուի, զոր ցուցնել պատրաստ ենք:

Ա. Վանայ խնդրոյն մէջ առանց քննութեան եւ առանց գատաստանի Պողոս վարդապետը պաշտօնէ կը դադրեցնէ եւ առանց կրօնական ու Քաղաքական ժողովոց գիտութեան կաքսորէ:

Բ. Ըստ որոշման Ընդհանուր ժողովոյ՝ ի Ս. Երուսաղէմ քաջուած հեռադրին վրայ նորին Սրբազնութեան սուլած բացատրութիւնը չգտնուեցաւ գոհա-

ցուցիչ . և յետոյ մինչդեռ Սրբազան Պատրիարք Հայրը կրտսեր թէ վարչութիւնը հրաժարած ըլլալուն ինք այդ հեռագիրը զարկեր է , հաստատուեցաւ թէ կրօնական ժողովը գոյութիւն և Մայիս 1 ին ալ նիստ ունի ելեր , որուն դիմած չէ Ս . Պատրիարք Հայրը , Մայիս 3 ին քաշած հեռագրին համար :

Գ . Կիլիկիոյ Կաթողիկոսին իրաւասութեան սահմանն առաջնորդական խնդրոց մէջ . Սահմանադրութեան հակառակ կառաջարկեր Սրբազան Պատրիարքը Կիլիկիոյ Կաթողիկոսին յանձնել այն պաշտօնը , որ կեդրոնական վարչութիւնն ունի ինչպէս ամեն դաւառաց , նոյնպէս և Կիլիկիոյ դաւառաց վրայ :

Դ . Քաղաքական ժողովոյ որոշման թուղթն՝ որով Սրբազան Պատրիարք Հօր ամասականին խնդիրը կը ծանուցուէր առ Տնտեսական խորհուրդն , ՚ի ներկայութեան Տնտեսական խորհուրդոյ Ս . Պատրիարքէն կը պատուուի :

Ե . Քաղաքական ժողովոյ որոշման հակառակ մուքաթայ կը հաւաքէ :

Զ . Քաղաքական ժողովոյ որոշման հակառակ Մշոյ Ս . Կարապետի վանուց մուքաթայի պարտուց համար գիր գրելը կարգելու , մինչդեռ 33300 շրշ . ցվերջ ապրիլի պարտական է Մշոյ Ս . Կարապետի վանքը , որոյ վանահայր Նորին Սրբազանութիւնն է :

Է . Բալուշի առաջնորդին՝ Խառն ժողովոյ որոշմանը հակառակ կերպով անոր դադարման պաշտօնագիր կը գրէ Նորին Սրբազանութիւնը :

Ը . Քատրգիւղի Թաղական խնդրոյն մէջ հակառակ որոշման Քաղաքական ժողովոյ՝ Ս . Պատրիարքը հրաժարական կընդունի . և յետոյ ալ Քաղաքական ժողովոյ որոշումը չգործադրէր : Քատրգիւղի Թաղականին բողոքն ալ առանց Քաղաքական ժողովոյ ցուցնելու , Պատրիարքական փոխանորդը ՚ի քննութիւն Տնտեսական խորհուրդոյ կը յանձնէ , և Տնտեսա-

կան խորհուրդն ալ նախադրականութիւն կուտայ այդ խնդրոյն :

Թ . Բ . Դրան նախարարաց որոշումն այցելութիւնները մեծաւ մասամբ և ժամանակին չի կատարելը :

Ժ . Ս . Պատրիարք Հայրը իր դահակալութեան օրէն սկսեալ 10000 զուրուշ ամսական կը ստահանջէ հակառակ նախորդ վարչութեան կրկին սրոշմանց , որոնց մէջ Ս . Պատրիարք Հայրը համամիտ գտնուած է : Այս պատճառաւ ց՛ա Մայիս ներկայ տարուոյս 28392 զուրուշ պարտական է Ս . Պատրիարքը կեդրոնական սնտուկին :

ՃԱ . Սիլիքէն մինչև վերջը Ս . Պատրիարք Հայր նախաամնօք կը վարուէր ժողովականաց և ժողովոյ դէմ . մինչև օտարին ըրած անարդանաց իրաւունք տալէ զսա , Նորին Սրբազանութիւնն ալ սկսաւ անարգել և խարդախ անուանել Քաղաքական ժողովը , ալ խարդախ անուանեալ Քաղաքական ժողով մը ժողովարանէն դուրս ալ կը վաճառուի և կը ձեծուի ալ :

9 Օգոստոս 1873  
 Ղալաթիա  
 Մնամբ յարգանքօք  
 Անդամք հրաժարեալ Քաղ . ժողովոյ  
 ՍԵՆԵՔԵՐԻՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
 ԲԱՐՍԵՂ ՀԱՂԱՃԵԱՆ  
 Գ . ՂԱԶԱՐՈՍԵԱՆ  
 ԱԼԻՔՍԱՆ ԽՕՐՍՍԱՆՃԵԱՆ  
 Ս . Պ . Պ . ՓԱՓԱԶԵԱՆ  
 ԲԱՐՔՈՂ ՔԻՒՐՔՃԻՊԱՇԵԱՆ

Այս գրութիւնը ինչպէս պիտի երևնայ Ընդհանուր ժողովոյդ , այնպէս նաև երևցաւ Յանձնաժողովիս որ տակաւին իր բնութիւնը կը փոխէր Քաղաքական ժողովին աւաջին գրութեան հետ բաղդատելով . եթէ աւաջինը որ իր հրաժարագիրն է , հրաժարականին պատճառները միայն կը յայտնէր , այս երկրորդը բողոքի և նոյն խի ամբաստանութեան կերպարանք առնելու կը ձգտէր , մանաւանդ իր երկու-

յօդուածներուն մէջ որ Քաղաքական ժողովոյ եղած անարդանաց կը վերաբերին և որոնց բողոքոյ բնութիւն ունենալը Քաղաքական ժողովոյ դիւանն ետքէն բերանացի յայտարարութեամբ եկաւ պրն . դեց յանուն Քաղաքական ժողովին Յանձնաժողովիս առջև . Յանձնաժողովս ալ իր պաշտօնին հաւատարիմ մնալու նախանձանդութեամբ յայտարարեց թէ ինչպէս յիշուի յետէն ըլլալ այդ անարգանաց խնդրոյն , այլ ինչպէս ըլլալ այդ անարգանաց խնդրոյն : Այս սկզբան հետեւելով յառաջ վարեց նաև միւս յօդուածներուն քննութիւնը , այսինքն ոչ թէ իբրև բողոք կամ ամբաստանութիւն նկատելով և իբրև այն քննելով թէ Սրբազան Պատրիարքը յանցաւոր է թէ ոչ , այլ քննելու և տեղեկանալու համար թէ Քաղաքական ժողովոյ կողմէն նշանակված այն կետեւուն մէջ Սահմանադրութեան գործադրութիւնը ձխտելու արժանաւոր է արդեօք Սրբազան Պատրիարքը , որպէս զի հասկըցովի Պնդ հանուր ժողովէդ որ վարչական գրութեան դէմ Ս . Պատրիարքին դանդառնութիւնը մինչև այդ կետեւուն ալ կը տարածուի թէ ոչ :

Հեռաւարար այսպէս յայտարարեց նաև Յանձնաժողովս Սրբազան Պատրիարքին երբ իրեն զիմեց բացատրութիւն տանալու համար :

Հոս պէտք է ծանօթացնէ Յանձնաժողովս Ընդհանուր ժողովիդ որ Քաղաքական ժողովոյ այս երկրորդ գրութեան թ . յօդուածը ևս որ պաշտօնական այցելութեանց կը վերաբերի , քննութեան ենթարկել չը հաճեցաւ , իբրև Սահմանադրութեան գործադրութեանը հետ վերաբերութիւն չունեցող խնդիր :

Այս ծանօթութիւնը տալէն ետքը կանցիկնք հիմա մնացեալ ութ յօդուածներուն վրայ Յանձնաժողովիս քննութեան արգելները մի առ մի ներկայացնելու , քննութիւնն որ Քաղաքական ժողովին

կողմէ առնուած բացատրութեանց , Պատրիարքարանի արձանագրութեանց և Սրբազան Պատրիարք Հօր տուած բացատրութեանցը վրայ հիմնեալ է :

Ա . « Վանայ խնդրոյն մէջ առանց քննութեան և առանց դատաստանի Պոզոս վարդապետը պաշտօնէ կը դադարեցնէ ( Պատրիարքը ) և առանց կրօնական և Քաղաքական ժողովոյ գիտութեան կաքսորէ » :

Սրբազան Պատրիարքը Վանայ առաջնորդ Պոզոս վարդապետը նախ պաշտօնէ դադարեցուցեր , ետքը Պայագիտ - Իւշ - Քիլիսէի վանքը զրկուելու համար Թագրիբ գրեր է Բ . Դրան : Պաշտօնէ դադարման տնօրէնութիւնն ու գործադրութիւնը Աղդային վարչութեան Քաղաքական մասին թափուր վիճակին մէջ տեղի ունեցած է , այսինքն նախորդ Քաղաքական ժողովոյ հրաժարմանէն ետև և արդի Քաղաքական ժողովոյ բնորութեանէն առաջ խի Թագրիբը արդի Քաղաքական ժողովին առաջին նիստին հետեւեալ օրուան թուականը կը կրէ :

Սրբազան Պատրիարքին այս տնօրէնութեանը դէմ կրօնական ժողովն Ընդհանուր ժողովին մատուցուելու համար բողոք մը պատրաստեր է անցեալ տարուան Յունիս ամսէն , ապա Վանեցւոց կողմէն մատուցեալ բողոքին վրայ Քաղաքական ժողովը իր 1872 Յուլիս 27 և Օգոստոս 3 նիստերուն մէջ յուղեր է խնդիրը , որ իր վերջնական որոշումը գտեր է Խառն ժողովին մէջ :

Այս ժողովին մէջ Սրբազան Պատրիարքը յայտարարեր է թէ Քաղաքական ժողովին դադարման միջոցին կրօնական ժողովին յանձնարարեր է տնօրէնութիւն ձգնել Պոզոս վարդապետին վրայ , որոյ ՚ի բաց առեալ անցեալ տշխարհաճանօթ եղելութիւնները մինչև այն օրը և ոչ Թա-

զական խորհուրդ մը հաստատուեր է վա- նայ մէջ ժողովրդեան այնքան բազմանացն հակառակ, բայց հրօնական ժողովը չու- վելով այս խնդրոյն մէջ մտնել պարտաւո- ռեր է ինքնին գործադրելու :

Սրբազան Պատրիարքը վերջացուցեր է յայտնելով թէ ինչ որ որ այս խնդիրը հա- սոյնը է ինչպէս ինչ որ քառասուն Երեսն ժողովն ալ որոշեր է որ Պօղոս վարդապետի մասին Նո- բին Սրբաւնձիւնէն խմբին ու պարտախանութիւն- թեանը իւր յանձնէ պէտք է շարժել քննելու :

Բ. « Ըստ որոշման Ընդհանուր ժո- ղովոյ՝ ՚ի Ս. Երուսաղէմ քաղաքի հեռագ- ըրին վրայ Նորին Սրբազնութեան տուած բացատրութիւնը չը գտնուեցաւ գոհա- ցուցիչ. և յետոյ մինչդեռ Սրբազան Պատրիարք Հայրը կ'ըսէր թէ վարչութիւ- նը հրաժարած ըլլալուն ինք այդ հեռա- գիրը զարկեր է, հաստատուեցաւ թէ հրօնական ժողովը գոյութիւն և Մայիս 1 ին ալ նիստ ունի եղեր, որուն գիտած չէ Սրբազան Պատրիարք Հայրը Մայիս 3 ին քաջած հեռագրին համար » :

Ընդհանուր ժողովն իր ԾՆ. նիստին մէջ որոշած էր որ Սրբազան Պատրիարքն ՚ի Ս. Երուսաղէմ քաղաքի հեռագրին վրայ բացատրութիւն տայ Քաղաքական ժողո- վին. այս որոշման համաձայն Սրբազան Պատրիարքը բացատրութիւն տուեր է Խառն ժողովին, Քաղաքական ժողովը մե- ծագոյն մասով որոշեր է որ տրուած բա- ցատրութիւնը գոհացուցիչ չը գտնէր, հրօնական ժողովը ընաւ կարծիք յայտ- նել չէ ուղեր այն պատճառաւ որ եթէ հեռագիրը քաղաքի ժամանակ Քաղաքա- կան ժողով չը կար, այլ հրօնական ժողով կայ եղեր :

Սրբազան Պատրիարքը յայտնէր է Խառն ժողովին մէջ և կրկնեց Յանձնաժո- ղովիս ալ որ ինք այդ մասին պատասխա- նատուութիւնը յանձն կառնէ Ընդհա- նուր ժողովին առջև » :

Գ. « Այլիկիոյ կաթուղիոսին իրաւա-

տութեան սահմանը առաջնորդական խնդ- րոց մէջ. Սահմանադրութեան հակառակ կ'առաջարկէր Սրբազան Պատրիարքը Այլի- կիոյ կաթուղիոսին յանձնել այն պաշտո- նը, որ կեդրոնական վարչութիւնն ունի ինչպէս ամեն գաւառաց նոյնպէս և Այլի- կիոյ գաւառաց վրայ » :

Այլիկիոյ վիճակաց վարչական յարա- բերութեանցը վրայ հրօնական և Քաղա- քական ժողովոց Ատենադպիրները միա- նալով ծրագիր մը շինելու և զայն Խառն ժողովին ներկայացուցեր են, որուն մէջ վիճակաց վարչական յարաբերութիւննե- ըրն ուղղակի կեդրոնական վարչութեան հետ հաստատուած են եղեր : Այս ծրագ- րին վրայ յօդուած առ յօդուած քննու- թիւնը չըսկած Սրբազան Պատրիարքն ընդհանուր գիտողութիւն մը ներկայա- ցուցեր է սա իմաստով թէ Այլիկիոյ կա- թուղիոսն ուղղակի յարաբերութիւն պէտք է ունենայ Այլիկիոյ վիճակաց հետ, Այս գիտողութեան վրայ վիճաբանութե- նէ ետք Խառն ժողովն առաջարկեր է որ Սրբազան Պատրիարքն ալ իր կողմէն ծը- րագիր մը շինէ : Այս ծրագիրն անկէ ՚ի վեր այսինքն Յունիս 11 էն ՚ի վեր տակա- լին չէ ներկայացուցեր Սրբազան Պատ- րիարքը :

Իսկ Սրբազան Պատրիարքը յայտա- բարեց թէ ծրագիր չինելու իրեն առա- ջարկութիւն ըլլալը չէր յիշեր. բայց ինչ ալ ըլլայ՝ ներկայացեալ խնդրոց մը վրայ իր կարծիքը յայտնելու իրաւունք ունի և զայն իրաւունքը գործածած էր. և թէ ինչպիսիք տակալին վիճաբանութեան ներ- քեւ ըլլալով, որոշում չէր տրուած որ այն որոշման գործադրութիւնը զրացած ըլլար ինք :

Ե. « Քաղաքական ժողովոյ որոշման հակառակ մուգաթա կը հաւաքէ » :

Քաղաքական ժողովը Տնտեսական խորհուրդին առաջարկութեամբ մուգա- թայի հաւաքման համար որոշեր է իր

1872 Հոկտեմբեր 5 ի նիստին մէջ որ Տն- տեսական խորհուրդը ձեռնարկէ հաւաք- ման գործողութեան Սրբազան Պատրիարք Հօր ազդեցութիւնն ու աջակցութիւնն ալ ստանալով : Տնտեսական խորհուրդն ալ իր կողմէն օրինաւոր տոմսակ պատ- բաստեր է մուգաթաներու հաւաքման համար, բայց Սրբազան Պատրիարքը չէ ընդունել : Սրբազան Պատրիարքին այս ընթացքին դէմ գանդատեր է Տնտեսա- կան խորհուրդը Քաղաքական ժողովին 1873 Մարտ 29 ԾՆ. նիստին մէջ, բայց այս մասին Քաղաքական ժողովին որոշման մը հետք չը տեսնուեցաւ արձանագրու- թեանց մէջ :

Իսկ Սրբազան Պատրիարքին գիտա- լորութիւնը չէ եղած իրեն վերադառնել մուգաթայի հաւաքման իրաւունքը, այլ եթէ Քաղաքական ժողովը հաւաքման գործողութեան մէջ Պատրիարքին գոր- ծակցութեան պէտքն անհրաժեշտ գա- տեր է, Նորին Սրբազնութեան ալ այն- պէս երեցեր է որ շատ աւելի գիւրջին կ'ըլլայ այդ հաւաքումը եթէ բոլորովին ինք ընէ զայն, գաւառները մինչև հիմա Պատրիարքին ստորագրութիւնը չանչաժ- են այդ մասին, և Նորին Սրբազնութիւ- նը մէկ քանի գաւառաց համար պարտա- լորեր է մնան ինք տուած ըլլով ստանալ մուգաթան անուղղակի միջոցներով :

Զ. « Քաղաքական ժողովոյ որոշման հակառակ Մշոյ Ս. Կարապետի վանուց մուգաթայի պարտուց համար գիր գրելը կարգելու, մինչդեռ 33300 դր. ցվերը Ապրիլի պարտական է Մշոյ Ս. Կարապետի վանքը. որոյ վանահայր Նորին Սրբազնու- թիւնն է » :

Քաղաքական ժողովն իր այս տարուան Մարտի 29 րդ նիստին մէջ որոշեր է կեդ- րոնական մնաուկին պարտատէրներուն շրջաբերական գրել, իրենց պարտուց վճարումը պահանջելու համար, ասոնց կարգէն է եղեր նաև Մշոյ Ս. Կարապետի

վանքը որուն մուգաթայի տուրքէն 33300 դր. ու շվերը Ապրիլի պարտական ըլլալը տեսնուեր է ազգային սնտուկի համարա- կային ներկայացուցած ցուցակէն : Սրբա- զան Պատրիարքը Մշոյ Ս. Կարապետի վա- նուց համար պարտատուած շրջաբերա- կանը չէ թողուր զրկել : Ասոր պատճառը Սրբազան Պատրիարքն այնպէս բացատրեց թէ ինք արգէն Մշոյ մէջ իր փոխանորդին գիր գրած ըլլալուն համար հարկ չէ տե- սեր, մանաւանդ որ իբրև վանահայր պա- տասխանատուն ինք է այդ պարտուց :

Է. « Քաղաքական ժողովն Խառն ժո- ղովոյ որոշման հակառակ կերպով անոր գաղտնական պաշտօնագիր կը գրէ Նորին Սրբազնութիւնը » :

Խառն ժողովն այս տարուան Յունիս 3 նիստին մէջ որոշեր է Քաղաքի առաջ նորդ Քաղաքական Պետրոս վարդապետը պաշտօնէն դադարեցնել, կերպով իրեն յիշած կրակնագրայ կախառակ Սահմանադրութիւ- նը ըլլալու գործարարէն համար : Այս իմաս- տով ալ նամակ մը գրուեր է և Սրբազան Պատրիարքին ստորագրութեանը ներկա- յացնել տրուեր է : Սրբազան Պատրիարքը նամակին խմբագրութիւնը փոխելով գա- ղարմանն իբրև պատճառ ժողովրդեան տփգոհութիւնն ու իրեն դէմ եկած հան- բազրութիւնները նշանակել է, որոնց մէջ եկեղեցիներ գոցելու և քահանայք պաշտօնէ դադարեցնելու ամբաստանու- թիւններ կան եղեր իր վրայ, և Սահմա- նադրութիւնը չը կրնալ գործադրել իբ- րև երկրորդական պատճառ աւելցու- ցեր է :

Քաղաքական ժողովը նախապէս ո- ղոշած է եղեր իր 1872 Նոյեմբեր 23 ի նիստին մէջ դարձեալ սոյն Քաղաքական վարդապետի խնդրոյն առթիւ որ ժողո- վրդեան կողմէն եկած հանրագրութեան պատճառաւ առաջնորդ մը առանց քն- նութեան և դատաստանի (պաշտօնէն դադարեցնելը Սահմանադրութեան հակա- ռակ կը համարի :



Ը. « Գատը գիւղի Թաղական խորհրդոյ ղեկավարն զհաւառակ որոշման Քաղաքական ժողովոյ Սրբազան Պատրիարքը հրաժարական կրնդունի և յետոյ ալ Քաղաքական ժողովոյ որոշումը չը գործագրէր : Գատը գիւղի Թաղականին բողոքն ալ առանց Քաղաքական ժողովոյ ցուցնելու , Պատրիարքական փոխանորդն ՚ի քննութիւն Տնտեսական խորհրդոյ կը յանձնէ : և Տնտեսական խորհուրդն ալ ստիպողականութիւն կուտայ այդ խնդրոյն » :

Գատը գիւղի Թաղական խորհրդոյ անդամներէն Պէյլէրեան Եղիա էֆէնտին իր հրաժարականն առ Ս. Պատրիարքը զրկելու է և ՚ի միասին բողոքագիր մը ուղղելու առ Թաղական խորհրդոյ ատենական տըր , որպէս զի եթէ Սրբազան Պատրիարքը կամի զրկել զայն ատենականտն : Քաղաքական ժողովն այս տարուան 7 Յունիս նիստին մէջ որոշելու է որ հրաժարագիրը պատճառաբանեալ ու բողոքատուան ըլլալով չը կրնար ընդունուիլ . պետք է որ ատենականտն բացատրութիւն ուղղուի : Սրբազան Պատրիարքը բողոքագիրը Գատը գիւղի Թաղական խորհրդոյ ատենականտն զրկելու է առանց բացատրութիւն ուղղելու : Այս հրաժարականաւ յիշեալ Թաղական խորհրդոյ հրաժարեալ անդամոց թիւն երեքի հասնելով և Թաղական խորհուրդն առկա մնացած հաշուային խնդրոց համար չը կրնալով ընտրութեամբ լեցնել թիւը , Ազգային Վարչութեան գիմեր է զրկելով ութ անձանց անուններու ցուցակ մը , որ անոնց մէջէն Ազգային Վարչութիւնը չորս անձինք առժամանակեայ խորհրդական որոշէ : Քաղաքական ժողովը 16 Յունիս նիստին մէջ որոշելու է թէ Կարլ Էլի-յ առժամանակեայ խորհրդականներ ընել , թէ մնայեալ անդամք պէտք է շարունակել իրենց պատասխանատուութեան պայմաններէն և իրենց անդամք ընել : Միանգամայն տեղեկանալով թէ Պէյլէրեան էֆէնտին բողոքագիրն հրաժարական

նին վրայ Թաղական խորհրդոյ ատենականտն բացատրութիւն չէ ուղղուած , երեք հրաժարեալ անդամները ՚ի ժողով հրուիրելու է և տպա ամբողջ Թաղական խորհուրդը հրաժարեալ և մնացեալ անդամներով , և 21 Յունիս նիստին մէջ որոշելու է հրաժարականները չընդունիլ և պաշտօնական գիրերով այս խնդրոյն կարգադրութեան արդիւնքը ծանուցանել : Այս նիստին Սրբազան Պատրիարքը ներկայ չէ եղեր և իր բացակայութեանը տրուած այս որոշմանը համեմատ գրուած գիրերուն ստորագրութիւնն ետ է ձգել , որպէս զի առաջիկայ նիստին իր գիտողութիւնները ներկայացնէ Քաղաքական ժողովին . և առաջիկայ նիստին գիտողութիւնը ներկայացուցելու է սապէս թէ ետքէն հրաժարելոց հրաժարականը չընդունիլը հակասական կերևնայ սակէ առաջ Թաղական խորհրդոյ մնացեալ անդամոց իրենց պաշտօնը շարունակելու համար գրուած նամակին հետ որ վստահութեան ցոյց մըն էր Վարչութեան կողմէն առնոյն անգամն , և վերջապէս թէ այս նոր անօրէնութիւնը կրնայ խռովութեան պատճառ ըլլալ Գատը գիւղի մէջ : Քաղաքական ժողովը հակասութիւնը Սրբազան Պատրիարքին կողմը գտելու է որ վերջընթեր նիստին՝ ուր ներկայ էր , չէր ընդգիմացած Պէյլէրեան էֆէնտին հրաժարականին չընդունուելուն և վերջապէս խնդիրն ՚ի կախ մնացելու : Այս կը հետևի Քաղաքական ժողովոյ տուած բացատրութիւններէն , վերջընթեր նիստերու ատենագրութեանց մէջ չէն անցած և վերջին մէկ քանի նիստերու ատենագրութեանց ծրագիրներէն որ դեռ չէն ընդունուած :

Այս բոլոր պատմութեան մէջ երկու կէտ կայ որ Սրբազան Պատրիարքին ու Քաղաքական ժողովին իրարու հետ յարաբերութեանցը կը վերաբերին իրենց փոխադարձ սահմանադրական պարտաւորութեանցը նկատմամբ : Մէկն է Գատը գիւղի Թաղական խորհուրդին ատենականտն բացատրութիւն ուղղելու որոշման անգործագրելի մնալը : Ասոր համար Սրբազան Պատրիարքը կրնէ թէ Քաղաքական ժողովոյ որոշումները գիւանաստան ՚ի գիր կառնու և իրեն կրներկայացնէ ստորագրելու և գործագրելու համար . երբէք Թաղական խորհրդոյ ատենականտն բացատրութիւն ուղղելու համար գիր չէ ներկայացած իրեն գիւանաստան կողմէն : Իսկ գիւանաստան այս մասին ցուցած պատճառն այն է որ հրաժարագիրները Սրբազան Պատրիարքը գիւանսին չէր յանձնած , որ գիւանսն ալ իր պարտքը կատարէր : Երկրորդ կէտն է Թաղական խորհրդականաց երեք հրաժարելոց հրաժարականները չընդունուելու մասին Քաղաքական ժողովոյ որոշմանը համաձայն պատրաստուած պաշտօնական գիրերուն Սրբազան Պատրիարքին չըստորագրելը : Սրբազան Պատրիարքը կը յայտնէ թէ Սահմանադրութեան Գլխ. յօդուածին իրեն տուած իրաւունքը գործածած է , զի այն յօդուածը կը տրամադրէ որ « Գատրիարքն իր բացակայութեան ատեն ազգային ժողովներու մէջ տրուած որոշումները պարունակող թուղթը դեռ չըստորագրած կարող է անոնց վրայ իր գիտողութիւնները յայտնելով խնդիրը կրկին քննութեան յանձնել » : Սրբազան Պատրիարքը կը յաւելու թէ նախապէս Քաղաքական ժողովն որոշած էր ընդունիլ երեք Թաղական խորհրդականաց հրաժարականները և իր կողմէն նամակ մը գրուած էր առ Թաղական խորհուրդն որ մնացեալ անդամք իրենց պաշտօնը շարունակեն , մինչև որ հրաժարելոց տեղ նոր ընտրութեան կամար պետք եղած անօրէնութիւնն ըլլայ ազգային Վարչութեան կողմէն . թէ այս նամակը Քաղաքական ժողովին որոշման համաձայն գիւանաստան կողմէն իրեն ստորագրութեա-

նր ներկայացած և ինք տուանց բնաւ փոփոխութեան ստորագրած էր , և հիմա վերջին որոշման առաջնոյն հետ հակասութիւնը տեսնելով պարտաւորելու էր գիտողութիւն ընելու : Կը մնայ ուրիշ կէտ մը , այն է Թաղական խորհրդոյ բողոքին Տնտեսական խորհուրդին յանձնուիլն առանց Քաղաքական ժողովոյ գիտողութեան : Բայց երկու նկատողութեամբ : Ա. վասն զի այս կէտը Սրբազան Պատրիարքին չը վերաբերիր ուղղակի , այլ իր Արժանագատու փոխանորդին , և Բ. վասն զի այս պարագայն Բնագիտութեան ժողովոյ վերջին գումարման օրէն ետքն ՚ի յայտ եկած է Քաղաքական ժողովին , ուրով այն օրը տրուած հրաժարագրին պատճառներուն իրեն բացատրութիւն չը կրնար ծառայել , Յանձնաժողովս չը մտապայ կէտին քննութեանը մէջ :

Ժ. « Սրբազան Պատրիարք Հայրն իր գահակալութեան օրէն սկսեալ 10000 զուրուշ ամսական կը պահանջէ հակառակ նախորդ Վարչութեան կրկին որոշմանց , որոնց մէջ Սրբազան Պատրիարք Հայրը համաձայն գտնուած է : Այս պատճառաւ ցմէկ Մայիս ներկայ տարւոյս 28392 զուրուշ պարտական է Սրբազան Պատրիարքը կեդրոնական սնուակին » :

Նախորդ Քաղաքական ժողովը 1870 Օգոստոս 4 ի նիստին մէջ ամսական 5000 զուրուշ սահմանելու է Սրբազան Պատրիարքին , Պատրիարքարանի մարակարարութեան ծախսերուն կամար և 1872 Ապրիլ 28 ի նիստին մէջ որոշելու է այս ամսականը 10000 ի վերածել 1871 Մայիս 1 էն սկսեալ հաշուելով : Սրբազան Պատրիարքն այս տարի Տնտեսական խորհուրդին յայտնելու է թէ ինք սկիզբէն իր ամսականը 10000 զուրուշ գիտէ և այնպէս կը պահանջէ : Այս տարուան Մայիս 15 ի նիստին մէջ Քաղաքական ժողովն այս խնդրովը զբաղելով Սրբազան Պատրիարքը հոն ալ միևնոյն յայտարարութիւնն ըրելու է : Քաղաքական

նր ներկայացած և ինք տուանց բնաւ փոփոխութեան ստորագրած էր , և հիմա վերջին որոշման առաջնոյն հետ հակասութիւնը տեսնելով պարտաւորելու էր գիտողութիւն ընելու : Կը մնայ ուրիշ կէտ մը , այն է Թաղական խորհրդոյ բողոքին Տնտեսական խորհուրդին յանձնուիլն առանց Քաղաքական ժողովոյ գիտողութեան : Բայց երկու նկատողութեամբ : Ա. վասն զի այս կէտը Սրբազան Պատրիարքին չը վերաբերիր ուղղակի , այլ իր Արժանագատու փոխանորդին , և Բ. վասն զի այս պարագայն Բնագիտութեան ժողովոյ վերջին գումարման օրէն ետքն ՚ի յայտ եկած է Քաղաքական ժողովին , ուրով այն օրը տրուած հրաժարագրին պատճառներուն իրեն բացատրութիւն չը կրնար ծառայել , Յանձնաժողովս չը մտապայ կէտին քննութեանը մէջ :

ժողովը Տնտեսական խորհուրդին հրահանգ տուեր է նախորդ որոշմանց համեմատ փորութիւ հաշուէկշուի գործողութեանց մէջ և Սրբազան Պատրիարքին ամասկանի խնդիրը խնդրոց կարգին մէջ անցուցեր է :

Սրբազան Պատրիարքը յայտնեց թէ ինք երբէք 5000 դրուշ բնութեամբ չէ իր ամսականը . եթէ Պատրիարքարանի մատակարարութեան ծախուց համար 5000 դրուշ որոշուեր է , այլ Պատրիարք մը Պատրիարքարանի մատակարարութեան ծախքէն ուրիշ ծախքեր ունի , որոնց մէջ գլխաւոր տեղ մը կը բռնեն ամեն օր իբրեւ հասարակաց Հայր իր գլխութեանը գիւմօղ խղճալի աղքատաց մատուցեալ նուէր ու օգնութիւնները : Պատրիարքը ստակաւեցնելու համար ամսական պէտք չէ որ առնէ , այլ միւս կողմէն ալ առած ամսականը պէտք է որ իր բոլոր ծախուց բաւէ : Ահա ասոր համար և ոչ իսկ որոշեալ չափով կրնայ ամսական յատկանագ Պատրիարքին : Իսկ Քաղաքական ժողովն այս սկզբունքը չը կրնար ընդունիլ , զի Սահմանադրութեան 12րդ յօդուածը կը տրամադրէ որ Պատրիարքը ազգային անորոշէն իրեն յարկաւոր ամսական պիտի ունենայ :

Ահա , Տիարք Երեսփոխանը , ասոնք են լուսաբանութիւնը որ կը հետեւի Քաղաքական ժողովոյ ներկայացուցած կէտերուն ու թիւնքնութեանն : Այս կէտերէն առաջին երկուքը , այսինքն Պողոս փարդապետին խնդիրն ու Երուսաղէմ քաջուած հեռագրի խնդիրը , Պատրիարքին ինքնին տնօրէնութեանը կը վերաբերին , Սահմանադրութեան 8րդ յօդուածին տրամադրութեանը ներքե կ'իյնան , և Պատրիարքին ու վարչութեան ժողովոց իրաւասութեան . սահմանին մեծ խնդիրը կը յարուցանեն , որ միշտ քար գայթակղութեան եղած է Պատրիարքներու ու ժողովներու համաձայնութեանը և

զոր Սահմանադրութիւնը մեծ խնամով կարգադրած է : Այս երկու ծանրակշիւ իրողութեանց մէջ Սահմանադրութեան գործադրութեանը նկատմամբ Սրբազան Պատրիարքին պատասխանատուութիւնը ազատ է , առաջնոյն մէջ խառն ժողովոյ որոշման շնորհիւ որ ընդուներ է խնդիրը Սրբազան Պատրիարքին կամոյցն ու պատասխանատուութեանը թողուլ , և երկրորդին մէջ Բնահանուր ժողովոյ որոշման շնորհիւ որ ըլլաւ Սրբազան Պատրիարքն հրաւիրեր է բացառութիւն տալ Քաղաքական ժողովին , որով Սրբազան Պատրիարքն իր սահմանադրական պարտաւորութիւնը կատարեր է , իսկ նոյն ինքն տնօրէնութեանց ու անոնց հետեանացը նկատմամբ Սրբազան Պատրիարքին պատասխանատուութիւնն անթերի մնացած է :

Մնացած կէտերը Քաղաքական կամ խառն ժողովոյ որոշմանց , գործադրութեանը կը վերաբերին և իբր այն Սահմանադրութեան 9րդ յօդուածին տրամադրութեանը ներքե կ'իյնան : Ասոնց մէջ Սրբազան Պատրիարքին տուած բացառութիւններէն կը հետեւի որ ոչ թէ Սահմանադրութեան այն յօդուածին գործադրութիւնը կը ժխտէ , ժողովոց որոշմանց գործադրութիւնը զլանալով , այլ մանաւանդ նոյն յօդուածին մէջ պարունակեալ իր դիտողութեան իրաւունքն 'ի գործ կ'ածէ : Իսկ արձանագրութիւններէն կը հետեւի թէ Սահմանադրութեան տրամադրութեանցը գէմ շարժելու աւելի խօսք ու սպառնալիք կոչ Սրբազան Պատրիարքին կողմէ քան թէ գործ , այնպիսի խօսքեր զորոնք Ազգային Երեսփոխանական ժողովոցը առջև ալ շատ անգամ յեղ յեղած է և որոնց պատճառն է այն անխտաստութիւնը զոր նորին Սրբազանութիւնն զգաց առաջին օրէն Սահմանադրութեան անթերի գործադրութեանը մասին : Սահմանադրութիւնն անթերի

չը գործադրելու կամքը Սահմանադրութեան մէջ թերութիւններ ըլլալու պիտակցութեանն յառաջ եկած է : Բայց գործադիր իշխանութեան պարտքը օրէնք մը թերութիւններով հանդերձ գործադրելն է , և իրաւունքն է միայն իր փորձառութեանը հեղինակութեամբ այն թերութիւնները ցոյց տալ օրէնսդիր իշխանութեան : 'զի բացարձակապէս կրնայ ըսուիլ ամեն ազգի ու ամեն տեղի համար թէ գէշ օրէնք մը ամենեւին օրէնք չունենալէն աղէկ է , և օրէնք մը ունենալ ու անոր մէջ ուղղօք գործադրել չուզածը չը գործադրել , օրէնք չունենալ բռնէ : Արդ՝ երբ գործադիր իշխանութիւնը չը գործադրէր օրէնքն առանց տրտօնութիւն մը տրուած ըլլալու իրեն օրէնսդիր իշխանութեան կողմէն որ զՊաշտը կը ներկայացնէ , պատասխանատու կ'ըլլայ այն օրէնսդիր իշխանութեան առջեւ և յանցաւոր կ'ըլլայ ազգին առջև : Սրբազան Պատրիարքին վրայ այսպիսի յանցանք մը հաստատելու համար , պէտք է որ օրինաւոր կերպով ամբաստանութիւն ըլլայ իր վրայ և յետքննութեան ու դատաստանի հաստատուի ըստ տրամադրութեանց 5րդ և 6րդ յօդուածներուն աղքատին Սահմանադրութեան : Այսօր Սրբազան Պատրիարքն ազատ է ամեն կեղտէ այս մասին , Բայց եթէ գործքը չէ հաստատուած , խօսքը շատ անգամ իր բերնէն լուսած է ըստ տրամադրութեանց Պատրիարքարանին , կը կրկնենք , Սրբազան Պատրիարքն իրաւունք ունէր Սահմանադրութեան մէջ տեսած թերութիւններն ու անկարելութիւնները ցոյց տալ և անոնց բարձու մը խնդրել զայս ըստ ընդհանուր կերպով քանի քանի անգամ Երեսփոխանական ժողովին մէջ , վերաքրննութեան գործողութիւնը փութացնելու համար շատ թախանձեց , պայմանաւորաբար գրաւ և վերջին անգամ իր հրաժարմանը հետ մատնանիշ ըրաւ այն

կէտերը որոնց գործադրութիւնն անկարելի կը համարի . այնքան թախանձանքներէն , այնքան բողոքներէն ետե՛ վերաքրննութեան գործին չորս տարի երկարած ժամկէտը և զեւ հաղիւ սխալը տեսնելով , ձանձրանալով , յուսահատելով , ինչպէս կ'ընէ ինք , և իր անկարելի դատած գրութեամբը չը կրնալով յառաջ վարել իր պաշտօնը , չը կրնալով իրացընել այն յայտերը զոր ինք իսկ ունէր իր Պատրիարքութեան օրով , բարեկարգելու ամփոփելու անբարեկարգ զիրուցան ազգը և արեանը հետ արտասքն աղքատներէն զուտացի ժողովրդեան , չը կրնալով զայս ընել , իրաւունք ունէր , այն , հրաժարելու . այլ Սահմանադրութեան շրջանակէն դուրս ելնելու , Սահմանադրութեան մէջ տեսած անկարելութիւնն իբրև խոչընդոտ իր քայլերուն առջեւ ընդոտնելու անցնելու , յայտարարութիւն ընելու իրաւունք չունէր : Օրէնքը կոխելով ազգեր փրկելու ելնող առաջնորդները խաբած են միշտ 'զԱզգերը և խաբուած են իրենք ալ . կը խաբուի Սրբազան Պատրիարքն ալ 'եթէ կը կարծէ որ երբ ինք օրէնքը չը յարգելու օրինակը տայ ազգին , աւելի գիւրաւ կը կառավարէ զազգը . չէ՛ . ահա այն ատեն անկարելի կ'ըլլայ ազգին կառավարութիւնը , զի օրինաց յարգութեանն դատ ուրիշ բարոյական պիտի չէ մնացած մեր ազգային վարչութեան համար , որոյ հիմն ու գործողութեան բոլոր միջոցը բարոյական գործութիւնն է :

Այս խօսքերն ընելով Յանձնաժողովս փայրկեան մը կասկածանաց չեն թարկեր Սրբազան Պատրիարք Հօր անկեղծութիւնը : Իր գահակալութեան օր ըրած երդմամբը՝ որով Սահմանադրութեան ոգւոյն ու սկզբանցը միայն յարեցաւ , առաջին օրէն յայտնեց իր համադրմը , և այս վերջին օրն ալ ուր չորս տարի գահակալութեանն է ետքն իր արձակումը կը խնդրէ ազ



իւր հրաժարականն ետ առնու : Տեսնելով որ իւր միջնորդութիւնն ապարդիւն է մնացեր, այժմ եկեր կարծիքը կը յայտնէ որ երկու հրաժարականներն ալ ընդունուին ընդհանուր ժողովն : Եթէ Ս. Պատրիարքին հրաժարականը յետս կոչել տալ կարեւոր եւ պատշաճ կը համարուի ներկայ պարագայից մէջ, ինչպէս եւ է իրօք, պէտք չէ որ Յանձնաժողովին անպաշտօն եղանակաւ ըրած միջնորդութեամբը բաւականաճանք, եւ անոր ելքովը գոհ ըլլանք . այլ պէտք է եւ ես կառավարկեմ որ միեւնոյն առաջարկութիւնը յանուն ընդհանուր ժողովոյ ներկայանայ իրիմեան Սրբազանին : Եթէ Նորին Սրբազանութիւնն ընդհանուր ժողովոյ որոշման առջեւ ալ անգործուելի մնայ եւ սինդէ իւր հրաժարականին վրայ, այն ատեն Ժողովը պարտ ու պաշտօն տնօրինէ : Թերեւս իրիմեան Սրբազան կը համակերպի ընդհանուր ժողովոյ որոշման, իւր հրաժարականն իրաւացի պատճառները կը զոհէ Սղգին կամաց : Թերեւս, կըսեմ, իւր սահմանադրականութեան մէկ նոր փորձը կուտայ : Ուստի կը կրկնեմ թէ ներկայ պարագայիս մէջ Յանձնաժողովոյ ըրածը յանուն ընդհանուր ժողովոյ չկրնար լինիլ եւ պէտք է յանուն ընդհանուր ժողովոյ լինի :

**ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ . ԷՖ .** — Խնդրոյն ծանուցութիւնը յայտնի է . Պատրիարք մը ունինք կայսերական հրովարտակաւ հաստատուած, նոյնպէս Քաղաքական ժողով մը՝ որ Բ. Գրան հրամանագրով հաստատուած է . առաջինը Սահմանադրութեան գործադրութիւնն անկարելի դատելով հրաժարական մատուց, եւ երկրորդը Սահմանադրութեան գործադրելի ըլլալը սինդելով հրաժարականը տուաւ . Ընդհանուր ժողովն ալ Յանձնաժողով մը կարգեց անոնց հրաժարմանց պատճառարանութիւնները քննելու համար . Յանձնաժողովն իր պաշտօնը կատարեց, եւ այսօր իր տեղեկագրովը մեզի այնքան բան կը բերէ, որքան մեք չուղեցինք իրմէ . մեր ուզածը կարծիք կամ առաջարկութիւն չէր, այլ լոկ քննութիւն եւ իրաց վիճակին վրայ տեղեկութիւն մը : Տեղեկագրին ընթերցումն ետեւ թէպէտ պահ մը դադար առինք, ամենին ալ խորհեցանք, բայց ոչ մէկ կուսակցութիւն մը կարող եղաւ

անոր վրայ որոշ գաղափար մը գոյացնել . վասն զի այդ տեղեկագրին մէջ որչափ որ դրսեւորեց եւ ծափահարութեան իսկ արժանի կէտեր կան, նմանապէս անընդունելի կէտեր ալ կան . անոր համար խղճներնիս հանդարտ չէ, եւ եթէ այսօր անպատճառ քուէ ուղէք, ճշմարիտ կըսեմ թէ մեր տալիք քուէն զրօ պիտի ըլլայ, այնչափ հասարակաց կարծիքը մեզի հետ խակ է այդ տեղեկագրին վրայ՝ որ չպիտի կարենանք խղճի հանդարտութեամբ անոր ըրած առաջարկութեան համար քուէ տալ . ուստի՝ երեսփոխանութիւնը սխալ քայլ մը չառնելու համար . . .

**ԱՏԵՆՊԵՏ ԷՖ .** (Ընդմիջելով) — Հասարակաց կարծիքը մի խառնէք, որովհետեւ ժողովուրդն արդէն մեզի Երեսփոխան ընտրելով, իւր նպատակն ու կարծիքը մեզի յանձնած է, ուստի Երեսփոխանը չեն կրնար ենթակայ ըլլալ օրական կարծեաց այլ միտակ պարտաւոր են ամենայն ազատութեամբ իրենց խորհրդածութիւնը յայտնել, որով իրենց նուիրական պաշտօնն ըստ արժանւոյն կատարած կըլլան :

**ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ . ԷՖ .** (Շարունակելով) — Այդ տեսութեամբ ըսել ուզեցի թէ Երեսփոխանը ոչ միայն իրենց կարծիքը չինելով քուէ պիտի տան, այլ եւ հասարակաց կարծիքն ալ պիտի չինեն . եթէ հասարակաց կարծիքը չզիտնալով քուէ տան, պառակտում կը յարուցանեն ազգին մէջ : Մեր ընկելքը լաւ կըլուէ ենք, վասն զի միայն ազգին հետ չէ գործերնիս, այլ նաեւ տէրութեան հետ ալ գործ ունինք այս պարագային մէջ : Ուստի կառավարիկեմ որ տեղեկագրիքը քուէի դրուելէ առաջ որոշուի տպագրութեամբ անոր մէջ մի օրինակն ամեն Երեսփոխանաց հաղորդել, որպէս զի իւրաքանչիւր որ ժամանակ ունենայ իր կարծիքը կանխաւ պատրաստելու եւ հասուն խորհրդածութեամբ ու համոզմամբ կարենայ յառաջիկայ նիստին իւր քուէն տալ :

**ԻՓԷԿՃԵԱՆ Զ . ԷՖ .** — Եթէ խնդիրը Ս. Պատրիարքին հրաժարման ընդունելութեան կամ չընդունելութեան վրայ է միայն, կը կրկնեմ Մէրեէմ—Գուլի էֆ . ին ըրած առաջարկութիւնը . իսկ թէ որ Օգոստէն էֆ . ի յառուցած խնդրոյն վրայ վիճարանութիւն պիտի

ըլլայ, ես խօսք կուղեմ այդ մասին, վասն զի ընդարձակ տեղեկութիւններ ունիմ, զորս պիտի ներկայացնեմ Ժողովին, որպէս զի խնդրոյն վրայ ամեն որ լուսարանուի եւ խելամուտ լինի թէ ճշմարտութիւնն ո՞ր կողմն է :

**Յովակիմեան Յ .** Եւ իւթիւճեան Կ . Էֆէնտիններն ալ կը ձայնակցին խիճկեան էֆէնտինին, Մէրեէմ—Գուլի էֆ . ի առաջարկութիւնը կրկնելու համար :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ .** — Խնդիրը լաւ հասկըցուելու համար յանուն դիւանին կը պարտաւորիմ բացատրութիւն մը տալ : Ընդհանուր ժողովն իր կողմէ Յանձնաժողով մը կարգած էր, որ այսօր իր տեղեկագրին եւ ընդնմին առաջարկութիւն մը բերաւ . դիւանը տարակոյս չունենալով թէ Ժողովն իր ընտրած Յանձնաժողովին վրայ վստահ, չպիտի վարանի անոր բերած տեղեկագրին ուղարկութիւն եւ կարեւորութիւն ընծայել, անորիցապէս տեղեկագրին եզրակացութեան քուէի դրուելն առաջարկեց . այլ այժմ քանի որ վիճարանութեան առնուելը պատշաճ թուեցաւ, ամեն երեսփոխան իրաւունք ունի եւ սզատ է իւր կարծիքը յայտնել :

**ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ . ԷՖ .** — Խնդիրն ըստ որում քննիչ Յանձնաժողովոյ բերած տեղեկագրին վրայ է, այս մասին պարտիմ իմ մէկ դիտողութիւնս յառաջ բերել : Տեղեկագրին ուղի ուղով մտիկ ըրի . դիտեցի որ Յանձնաժողովը պարտք համարեք է ՚ի քնին առնուլ թէ ինչպէս վարուած է Սրբազան Պատրիարքը Սահմանադրական օրինաց գործադրութեանը մէջ Քաղաքական ժողովոյ ամբաստանած կէտերուն նկատմամբ . սակայն ինչօք չէ խուզարկեր եւ քննեք Քաղաքական ժողովոյ արարքն ալ թէ Սահմանադրութիւնը կէտ առ կէտ ինչպէս գործադրած է : Քանզի հետաքրքիր ենք իմանալ թէ Քաղաքական ժողովոյ արարքն իւր մէկ տարուան պաշտօնավարութեան մէջ ինչ արդիւնք արտադրած է Սահմանադրութեան գործադրութեան նկատմամբ : Տեղեկագրեր Օտեան էֆէնտինն կը խնդրենք որ այս կէտը բացատրէ :

**ՕՏԵԱՆ Գ . ԷՖ .** — Երեսփոխան էֆէնտին

ներ . խօսողներուն վերջինը Աղաբէկեան էֆէնտին, հարցում մը ուղղեց, ուղղակի առ իս, բայց ես միայն անոր պատասխանելու համար չէ որ ոտք ելայ, այլ անկէ առաջ խօսողներուն ալ միանդամայն պիտի պատասխանեմ : Երբ ՚ի սկզբան Ստենագրատ էֆէնտին քննիչ Յանձնաժողովոյ տեղեկագրին եզրակացութիւնը քուէի դնել առաջարկեց, ամենէն առաջ Մէրեէմ—Գուլի էֆէնտին դէմ ելաւ այս առաջարկութեան, ըսելով թէ Յանձնաժողովոյ քննութեամբը Սրբազան Պատրիարք Հօր յանցանք մը գործած չըլլալը հաստատուած է . եւ իբր ապացոյց մէջ բերաւ թէ Յանձնաժողովը ազաչեք է շէտրին Սրբազանութիւնն իր հրաժարականը յետս կոչելու : Այս խօսքը բացատրութիւն կը պահանջէ, և տալիք բացատրութիւնս միւս խօսքերուն ալ թերեւ իբր պատասխան պիտի ծառայէ : Յանձնաժողովը սրաշտօն չունէր քննելու թէ Սրբազան Պատրիարքը յանցաւոր էր թէ ոչ : Այնպատանութիւն չկար, և Յանձնաժողովը չէր կարգեալ իբր քննիչ դատաւոր, այլ քննիչ միայն անհամաձայնութեան պատճառաց :

Ուստի իրաւունք չունէր, ոչ յանցանք գործած է ըսելու Պատրիարքին համար, ոչ գործած չէ ըսելու : Յանձնաժողովը իր տեղեկագրին մէջ ըսած է արդէն, թէ այս կերպ քննութիւն և զգատատան մը այն ատեն կրնայ ըլլալ, երբ օրինաւոր ամբաստանութիւն մը երևան դայ : Բայց ինչօք Յանձնաժողովն ազաչեց Սրբազան Պատրիարքին ետ առնել իւր հրաժարականը, և ինչօք հիմա ընդհանուր ժողովին ալ կ'առաջարկէ որ ընդունի հրաժարականը : Յանձնաժողովս երկու կողմէ մէջ բերուած պատճառներու վրայ յենլով և տեսնելով որ եթէ մէկ կողմէն Սահմանադրութեան գործադրութիւնը կը պահանջուի, միւս կողմէն ալ հետո չէ Սահմանադրութեան դէմ : Արովհետեւ անհամաձայնութիւնը Սահմանադրութեան գործադրութեանը նկատմամբ գոյացած էր, Յանձնաժողովը կըցաւ հաւտալ թէ երբ այս պատճառը վերնայ կրնան միարանիլ Սրբազան Պատրիարքն ու Քաղաքական ժողովը : Ուստի նախ փորձ մը ըրաւ Սրբազան Պատրիարքին քով իր հրաժարականն ետ առնել տալու համար . չը յաջողեցաւ, հիմա ալ Երեսփոխանաց քով փորձ մը կ'ընէ հրաժարա-

կանն ընդունել տալու համար . պատճառը մէկ խօսքով բացատրած է Յանձնաժողովը , և այդ մէկ խօսքը շատ աւելի կ'ըսէ , քան իմ շատ խօսքերս . « Կացութիւն մը երբ այսքան կը ձգտի պէտք է խզի » : Մեր պաշտօնէն դուրս ըլլալով դատել երկու կողմն ալ , թէ Արքազան Պատրիարք և թէ Քաղաքական ժողովան պարտ կը մնային 'ազգին առջև : Անհամաձայնութեան պատճառն երևան եկած ու որոշուած ըլլալով , պատճառին հետ , որուն ինչ եղանակաւ կարգադրուելուն համար Յանձնաժողովին ըրած առաջարկութիւնները լսեցիք , կրնար վերնալ անհամաձայնութիւնն ալ : Յանձնաժողովս տեսաւ թէ այդ բնական վիճակին մէջ չէր մնացած խնդիրը , տեսաւ որ Սրբազան Պատրիարքին համար անկարելի է իր հրաժարականը ետ առնել , նոյն իսկ եթէ Քաղաքական ժողովը պաշտօնէ քաշուելու ալ ըլլայ : Կը պնդեմ ասոր վրայ , վասն զի Ս . Պատրիարք հօր անկեղծութեանը վրայ կասկածելու պատճառ մը չունիմ :

Նորին Սրբազանութիւնը Սահմանադրութեան անգործագրելի կէտերը նշանակած էր . Յանձնաժողովս մէկ քանի կէտերուն սրբազրութիւնը անհրաժեշտ կը դատի և կառաջարկէ ընդհանուր ժողովոյդ , այլ մեր առաջարկութիւնները կը տարբերին քիչ մը Ս . Պատրիարքին առաջարկութիւններէն . 'ի մի բան , այս և ուրիշ պատճառներով Ս . Պատրիարքը իր հրաժարականը ետ չուզէր առնել . հաւատացէք ինձի , մի՛ երկարէք այս վիճարանութիւնը 'ի սէր խաղաղութեան , 'ի սէր Սահմանադրութեան և 'ի սէր անձանց , 'ի սէր Ս . Պատրիարքին , ընդունեցէք իր հրաժարականը , Այսպիսի պարագայից մէջ որչափ շուտ գործենք այնչափ ազէկ գործած կըլլանք : Սրբազան Պատրիարքը իմ վաղեմի բարեկամս է , իմ զգացումներս չեն այլայլած իր վրայ , և կը յուսամ որ անայլայլելի կը մնան մինչև 'ի մահ : Սյս է Ս . Պատրիարքին օգուտը , այս է ազգին խաղաղութեան օգուտը :

Ինչ որ մինչև հիմա ըսի , կրնայ միանգամայն իբր պատասխան ծառայել Օգոստէն էֆ . ի ըրած դիտողութեանցը մեր տեղեկագրին վրայ : Նա յաւելցուց թէ մեր տեղեկագրին մէջ կան կէտեր՝ որ գովեստից և ծափահարութեան արժանի են , և թէ կան այնպիսի կէտեր ալ

որ գովեստի արժանի չեն ու անընդունելի են . կը փափաքէի դիտնալ թէ որո՞նք են այդ կէտերը , որպէս զի իր դիտողութեանցը պատասխանէի : Գովեստ չեմ փնտռեր տեղեկագրին համար , եթէ արժանիք մը ունի նա , իւր կատարեալ անկողմնասիրութիւնն է : Իսկ թէ պէտ անընդունելի դատած կէտերը կուզէի գիտնալ որ պատասխանեմ . բայց որովհետև այսօր պատրաստ չըլլալը յայտնեց , միւս կողմէն ես ալ չեմ ուզեր որ երկարի վիճարանութիւնը , անոր համար կը փափաքեմ որ երկու կողմանի հաւանութեամբ հոս թողունք կնքենք այս վիճարանութիւնը և անմիջապէս մեր եզրակացութիւնը քուէի դնենք :

Այժմ կուզամ Աղաբէկեան էֆ . ի հարցմանը պատասխանել . նա ըսաւ թէ Ս . Պատրիարքը դատեցիք , վասն զի ամբաստանուած էր , ինչո՞ւ Քաղաքական ժողովն ալ չդատեցիք :

ԱՂԱԲԵՂԵԱՆ ՄԱՐԿՈՍ ԷՖ . — (Ընդմիջելով) — Ես դատել չըսի , քննել ըսի :

ՕՏԵԱՆ ԷՖ . — Լաւ , կըսէք թէ Պատրիարքին արարքը քննեցիք , ինչո՞ւ Քաղաքական ժողովինն ալ չը քննեցիք : Այս հարցման պատասխանն իր մէջնէ , վասն զի Քաղաքական ժողովոյ գէժ ամբաստանութիւն չկար :

ԱՅՎԱՏԵԱՆ Մ . ԷՖ . — Քննիչ Յանձնաժողովոյ տեղեկարէր էֆ . ի տրուած բացատրութեանց մէջ կէտ մը կայ պակաս թողուած , որուն պատասխանը տալ պարտաւոր է . պէտք եղած քննութիւնը կատարելէ ետեւ երբ հրաժարականներն ետ առնել տալ պատշաճ դատեր է , ինչո՞ւ արդեօք Ս . Պատրիարք չօր դիմելէ եւ անյաջող մնալէ ետեւ անգամ մ'ալ Քաղաքական ժողովին դիմել հարկ չէ տեսեր : Խնդիրը պարզ է . Սրբազան Պատրիարքը Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն չեմ կրնար շարունակել կըսէր , թէ եւ ոգւոյն եւ սկզբանց հաւատարիմ մնալու խօսք մը կայ որ կը յեղյեղի , ինչպէս Յանձնաժողովն ալ իր տեղեկագրին մէջ յառաջ բերած է . բայց ես այդ խօսքը չեմ կրնար հասկընալ , Սահմանադրութեան մէջ չեն կրնար զտուիլ թէ ոգւոյն եւ սկզբանցը վերաբերեալ կէտերն ո՞րոնք են . ուստի Յանձնաժողովը խաղա-

ղասիրութեամբ վերջ մը տալու համար պարտաւոր էր հրաժարականներն ետ առնել տալու առաջարկութիւնն երկու կողման միանգամայն ընել , եւ անյաջող դտնուելէ ետեւ հրաժարականներն ընդունելու առաջարկութիւնը բերել ժողովին : Պայով Օգոստէն էֆ . ի որ ըսաւ թէ Յանձնաժողովոյ տեղեկագիրը պէտք էր տպագրութեամբ երեսփոխանաց հաղորդել , թէ եւ իրաւացի կը գտնեմ այդ դիտողութիւնը , վասն զի հարկ էր որ ամենա ալ կանխաւ իմաստասիրէինք նորա բովանդակութիւնը . սակայն հոգ չէ , արդէն խնդիրը հրապարակն ելած է եւ եղելութեանց բողոքովին ծանօթ եղած ենք . տարակոյս կա՞ջ արդեօք . երբ հարցում մը լինի Երեսփոխանական ժողովին թէ վարչութեան գլուխ զըտնուող անձը կրնա՞յ առանց դատաստանի եւ առանց վարչութեան որոշման մէկն աքտրել , ո՞չ պիտի պատասխանէ . նոյնպէս եթէ հարցուի թէ վարչութեան Նախագահը կրնա՞յ Ազգային զանձուն հետ խաղալ , ո՞չ պիտի պատասխանէ . այս եւ ասոնց նման ուրիշ ամբաստանական կէտերուն մի առ մի քննութեանը մտնել երկար կըլլայ . կարելի է որ այդ ամբաստանութիւններն իրենց իրաւացի կամ անիրաւ կողմերն ալ ունին . ասոնց խօրը մտնել խիստ դժուարին է : Ուստի ես կառաջարկեմ Յանձնաժողովոյ տեղեկագիրն այսօր քուէի դնել առանց տպագրութեանն սպասելու , միայն մէկ փոփոխութեամբ մը . այսինքն հրաժարականի մասը զատելով համարատուութեան մասէն . որովհետեւ Սրբազան Պատրիարքը պատասխանատու եմ ըսած է Յանձնաժողովին , նոյնպէս Քաղաքական ժողովն իր հրաժարագրովը խոստացած է համարատուութիւնը ներկայացնել ժողովին . երկուքին ալ համարատուութեան մասերը զատելով՝ իրենց հրաժարականը զատ զատ քուէի դնել եւ վերջացնել այս խնդիրը :

ԱՂԱԲԵՂԵԱՆ Մ . ԷՖ . — Հարկը պահանջում է որ երկու խօսքով պատասխանեմ Օտեան էֆ . ի : Այն օրն՝ երբ 17 Երեսփոխանաց կողմէ առաջարկութիւն եղաւ թէ պէտք է առժամանակեայ Գործադիր Յանձնաժողով մը դրուի եւ մէկ մ'ալ Քննիչ Յանձնաժողով մը , որ քննէ Պատրիարքին եւ Քաղաքա-

կան ժողովին հրաժարման պատճառները , ես ըսի թէ աւելորդ են այդ Յանձնաժողովները . որովհետեւ Պատրիարքին հրաժարման թուղթը եւ Քաղաքական ժողովոյ ամբաստանագիրը կարողացուելով հասկցուեցան երկու կողման առարկութիւնները . մէկը կուզէր հասկցնել իր սահմանադրական արարքը եւ միւսն իր անտի-սահմանադրական արարքը . ուղեցի իմանալ թէ Քննիչ Յանձնաժողովոյ պաշտօնն ինչ պիտի ըլլար , հաշտարար թէ դատաւոր պիտի ըլլար , մինչեւ անգամ առանձին Օտեան էֆ . ի հարցուցի լաւ հասկնալու համար . բայց նոյն միջոցին ժողովրդեան ծափահարութեամբ ընդմիջեցաւ մեր խօսքը , եւ լռել պարտաւորեցայ . Ստե՛նապետ էֆ . ստիպեց շարունակել . ես ալ եզրակացնելով իմ խօսքըն առաջարկեցի որ հրաժարողներն երկուքն ալ իրենց տեղը մնան , եւ միւս կողմէն Երեսփոխանութիւնն աճապարէ Սահմանադրութեան վերաքննութիւնն 'ի կատար հանելու : Սյսու ամենայնիւ Քննիչ Յանձնաժողովը դըրուեցաւ , եւ այսքան օր սպասելէ ետեւ կը տեսնեմք որ այսօր այդ յանձնաժողովը դարձեալ խնդիրը միեւնոյն կէտին բերեր յանգեցուցեր է մէկ տարբերութեամբ մը , այսինքն երկու կողման հրաժարականներն ընդունելու թէութեամբ . այն օրն ալ կարող էինք ընդունիլ հրաժարականները . բայց 21 օրէն ետեւ երբ երկու կողմն ալ անմեղ կը գտնենք եւ հրաժարականին կուզենք ընդունիլ , այս ի՞նչպէս բան է :

(Մտփահարութիւն ժողովուրդէն)

Եզրակացնելով խօսքս կասեմ . ես իմ բարեկամներէս ոմանց կողմէն ճանաչուած եմ իբրեւ անտի-սահմանադրական ոք . զայդ հերքելու համար բաւական կը համարիմ աւսել թէ այդ բարեկամներս Երեսփոխանական եւ Քաղաքական ժողովոց ակնունքուն վրայ չբազմած , ես 3 տարի յառաջ Սահմանադրութեան վրայ յառաջբան մը դրած եւ հաստատած եմ որ մեր ազգը Հայկայ ժամանակէն Սահմանադրական է եւ Սահմանադրութեան տարբերքն իր մէջ ունի : Միանգամ ընդմիջտ հերքելով այդ իմ մասին եղած անտի-սահմանադրական խօսքը , կը դառնամ խնդրոյն

եւ կասեմ որ ես չեմ կրնար համոզուիլ եւ անմեղ մարմնոյ մը հրաժարականն ընդունիլ . Քաղաքական ժողովը կըսէ թէ Սահմանադրութիւնը կէտ առ կէտ կրնայ գործադրուիլ եւ ինք գործադրած է . պէտք է Յանձնաժողով մը գրուի զայդ կէտը քննելու համար . եթէ Քաղաքական ժողով ըստած մարմինը կարողացեր է բառ առ բառ գործադրել Սահմանադրութիւնը , մենք պարտինք չնորհակալութիւն անել իրեն եւ չէ թէ հրաժարականն ընդունիլ : Այս առաջարկութիւնս խիստ ստիպողական է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Խնդրէն դուրս է ձեր առաջարկութիւնը . միայն կարճանագրուի :

ՄԷՐԵՏԻՄ—ԳՈՒԻԼԻ . Յ . ԷՅ . — Տեղեկարեր էՖ . ըսաւ թէ որքան շուտ գործենք , այնքան ազէկ գործած կըլլանք : Ես ալ ճիշդ այնպէս կը խորհիմ , և այդ նպատակաւ նախորդ նըստին մէջ առաջարկեցի որ առանց խնդիրն երկարացնելու հրաժարականներն անմիջապէս քուէի դրուին կարգաւ : Բայց բանի որ ժողովս Քննիչ Յանձնաժողով մը գրաւ , որ այս օր իւր տեղեկագիրը կը ներկայացնէ , և խնդիրը խիստ լաւ կերպով կը լուսաւորէ , ես ալ նոյն տեղեկագրին հետեւողութեամբ խօսեցայ և առաւաճարկեցի ինչ որ խնդրոյն վիճակը կը պահանջէր : Թէև Տեղեկարեր էՖ . բարեհաճեցաւ յանուն Յանձնաժողովոյ , իմ խօսքերուս պատասխանել . բայց այն պատասխանը իմ կարծիքս չկրցաւ փոխել : Եթէ Քննիչ Յանձնաժողովոյ համար թէ՛ Պատրիարք և թէ՛ Քաղաքական ժողովոյ անդամք , երկու կողմն ալ անմեղ էին . եթէ այս պատճառաւ Յանձնաժողովը դիմեց Ս . Պատրիարքին որ իր հրաժարականը ետ առնու , և եթէ Ս . Պատրիարքը ընդունէր իրեն եղած առաջարկութիւնը , Յանձնաժողովը մտադիր էր միևնոյն առաջարկութիւնը Քաղաքական ժողովոյ անդամոց ալ ընելու , չեմ հասկնար թէ Պատրիարք և Քաղաքական ժողովոյ անդամք ի՞նչպէս պիտի էարենային այսուհետև ՚ի միասին պաշտօն վարել : Ասոնց երկուքն ալ որչափ որ իրարմէ ամբաստանեալ չհամարուէին , տարածայնութիւնը , բամբասանքը՝ այնչափ տարածուած էր , մտքերն այնչափ զայթակղած էին , անհամա-

ձայնութիւնն իրենց մէջ այնչափ մեծցած էր , որ իրենց այս կասկածելի դրից մէջ , չեմ կրնար ըմբռնել թէ իբր գլուխ և մարմին ի՞նչպէս պիտի միանային ազգային իշխանութիւն վարելու :

Գալով անձանց սիրոյն համար հրաժարականներն ընդունելու առարկութեան , ահաւասիկ իմ կարծիքս : Խորիմեան Սրբազան ինձ համար սիրելի հայր մ'է . Քաղաքական ժողովոյ անդամք ալ , քիչ բացառութեամբ իմ ազնիւ բարեկամներս են . ըսել է երկուքն ալ սիրելու պատճառներ ունիմ . բայց իմ ազգս անոնց ամենէն աւելի կը սիրեմ . և այս ծանրակշիռ պարագային մէջ , ՚ի սէր անոնց անձին գործն անուշ տեղը կապելու գրութիւնը չեմ ընդունիր : Եթէ Խորիմեան Սրբազան իրօք հակասահմանադրական է , պէտք է գիտնալք և ճանչնալք , որպէս զի այսուհետև իրեն ազգային պաշտօն յանձնելէ զգուշանանք : Եթէ Քաղաքական ժողովոյ անդամոց Խորիմեան Սրբազանի վերագրած յանցանքներն անհիմն են կամ պատրուակ , պէտք է ազգն իմանայ և դատէ , որպէս զի անհիմն պատճառանօք ազգն այսպէս վեր ՚ի վայր յուղելու այսուհետև ոչ ոք համարձակի : Հոս հարկ կըլլայ ինձ կրկնել թէ ըստ որում Յանձնաժողովը հասուն քննութեան մ'ետև հարկ տեսեր է առաջարկել Քաղաքական Պատրիարքին որ իւր հրաժարականն ետ առնու , անոր համար կը սնդեմ թէ այս առաջարկութիւնը Ընդհանուր ժողովոյ կողմէ ալ պէտք է լինի պաշտօնապէս :

Գառնալով Ս . Պատրիարքին Սահմանադրութեան վերաքննութեան մասին ունեցած կարծեաց և առաջարկութեանց . ասի բնաւին արդէր մը չէ մեզի համար Ս . Պատրիարքին հրաժարականը մերժելու : Վերաքննութեան խնդիրը Ընդհանուր ժողովոյս համար խիստ պարզ է , մեք սա գիտենք որ Ընդհանուր ժողովը Սահմանադրութիւնը ծայրէ ՚ի ծայր վերաքննութեան ենթարկած է , և այդ վերաքննութեան գործն և ոչ մէկու կամայք կրնայ զոհել : Ս . Պատրիարքը կարող է և իրաւունք ունի ուղածին չափ առաջարկութիւն բերել վերաքննութեան նկատմամբ , բայց Ընդհանուր ժողովին բացարձակ իրաւունքն է՝ զանոնք ընդունելու կամ մերժելու իրաւասութիւնը : Եթէ Խորիմեան Սրբազան Սահմանադրութիւնը

Ընդհանուր ժողովոյ վերաքննութեան համեմատ գործադրել չուզէ , այն ատեն տարակոյս չկայ թէ հակասահմանադրական կը լինի , և Ընդհանուր ժողովն ալ ինչ որ պէտք է զայն կը տնօրինէ : Բայց բոլորովին տարբեր բան է ելնել այս օրուրնէ , առանց ապացոյցի Խորիմեան Սրբազան հակասահմանադրական է ըսել , փոյթ չէ եթէ Այվատեան էՖ . « Սահմանադրութեան ուղւոյն և սկզբանց հուսատարիմ մընալ , խօսքին նշանակութիւնը չհասկնար . մեք շատ լաւ կը հասկնամք անոր նշանակութիւնը : Ուստի դառնալով իմ առաջարկութեանս կը կրկնեմ որ յանուն Ընդհանուր ժողովոյս առաջարկուի Ս . Պատրիարքին իր հրաժարականը յետս կոչել :

ՕՏԵԱՆ Գ . ԷՅ . — Թէ Ս . Պատրիարք հայրը և թէ Քաղաքական ժողովն երկուքն ալ հրաժարական մատուցած են . Ժողովը պարտք մը ունի ընդունելու կամ մերժելու . բայց եթէ Ժողովը հրաժարականները չընդունի , պէտք է որ տուողներն ալ ետ առնեն : Քննիչ Յանձնաժողովը որ ձեր վստահութեամբը պատուեցիք և կարծեմ ձեր վստահութեանն արժանապէս պատասխանեց , տեղեկացաւ այդ կէտին ալ . Ս . Պատրիարքին հետ խօսեցաւ , և բան մը որ տեղեկագրին մէջ չկայ , հոս կրրնամ յայտարարել , Քաղաքական ժողովոյ անդամոց ոմանց հետ ալ կէս պաշտօնական կերպով բանակցեցաւ , և համոզուեցաւ որ երկու կողմն հրաժարականները բացարձակ են : Եթէ մեր վրայ վստահութիւն ունիք , ահա մենք ենք որ կը յայտնենք զայս . իսկ եթէ չէք վստահիր մեր այս ըսածին , պատգամաւորութիւն մը կը դնէք ձեր կողմն , որ կերթայ բուն իսկ իրենցմէ կը տեղեկանայ : Այս ըսածս նաև Այվատեան էՖ . ի հարցմանը կրնայ ծառայել : Վերջապէս եղբակացնելով կը յայտնեմ որ մեք Տեղեկագիր մը բերինք հոս , իրաւ է թէ տալագրութեամբ հաղորդուած չէ երեսփոխանաց . բայց քննութեան առարկայ եղած կէտերն ամենուն ալ ծանօթ էին թամանակէ մը ՚ի վեր , և Յանձնաժողովին քննութիւնը կրցաւ դատել ժողովը որ անկողմնապահութեամբ ու անաչառութեամբ եղած է . Տեղեկագիրը չը լսող չը հասկըցող մը չեղաւ . կարծեմ թէ Ընդհանուր ժողովը օրինաւորապէս

չարժած կըլլայ , և այս օրինաւորութեան դէմ չը գիտեմ ինչ առարկութիւն կրնան յարուցանել , անմիջապէս քուէի դնելով : Ես զայս կառաջարկեմ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ . ԷՅ . — Տեղեկարեր էՖ . վստահութիւն կուտայ մեզ թէ Ս . Պատրիարքը տրամադիր չէ իր հրաժարականն ետ առնելու . ես չեմ ըսեր թէ Յանձնաժողովը վստահութեան արժանի չէր , այլ հրաժարական ետ առնել տալու պաշտօն չունէր : Քաղաքավարական պարտք մը կըլլար քուէի դնել Յանձնաժողովոյ առաջարկութիւնը . ես զայդ չեմ ընդունիր , քաղաքավարութեան պայմանը քուէարկութեան հետ գործ չունի . ասոր համար կառաջարկեմ որ Ատենապետ էՖ . դիւանին անդամոց հետ յանուն ժողովոյն երթայ պաշտօնական կերպիւ հարցնէ Ս . Պատրիարքին թէ Սահմանադրութիւնը մինչև ցաւարտ վերաքննութեան անթերի գործադրելու պայմանաւ կրնողունի՞ արդեօք իր հրաժարականը յետս կոչել : Ասանկով բնաւ հարկ չի մնար Յանձնաժողովին բերած առաջարկութիւնը քուէի դնել :

ՕՏԵԱՆ Գ . ԷՅ . — Պայմանաւոր հրաւէր մը ընելէ առաջ՝ պէտք է գիտնալ նախ թէ , նոյն իսկ առանց պայմանի հրաւէր մը ընդունելի կըլլայ : Եթէ Պատրիարքը ըսէ , « դուք առանց պայմանի ալ գալու ըլլայիք , ետ չը պիտի առնէի հրաժարականս , հապա ի՞նչ են այդ պայմանները » , ի՞նչ պիտի ըսէք :

ՊԵԿԵԱՆ Թ . ԷՅ . — Սրբազան Պատրիարքն ու Քաղաքական ժողովը մէյմէկ հրաժարական բերին մեզ , որոնք պատճառարանեալ էին . Յանձնաժողով մը դրուեցաւ պատճառները քննելու համար . այդ Յանձնաժողովըն այսօր իր տեղեկագիրը մատուցած է , որուն մէջ կը յաւելցնէ թէ քննութիւնը կատարելէ ետև միանգամայն փորձ մը ըրեր է երկու հրաժարեալ մարմիններն իրարու հետ հաշտեցնել եւ անկարելի գտեր է : Գիւսանն ըստ օրինի Յանձնաժողովոյ տեղեկագիրը քուէի դնելու առաջարկութիւն ըրաւ . պէտք էր որ այս առաջարկութեան վրայ խօսուէր եւ տեղեկագիրը քուէի դնելու կամ չդնելու կէտը նախ որոշուէր . սակայն կը ցաւ իմ որ երես-

փոխաններէն ոմանք դիւանին յայտարարու-  
թեան հակառակ խնդրոյն խորը մտան . գի-  
տէք անուշտ որ ամեն տեղ օրէնք է , ասանկ  
պարագաներու մէջ նախ Յանձնաժողովին բե-  
րած տեղեկագրոյն ամբողջութիւնը քուէի  
դնել , ընդունիլ զայն կամ մերժել , եւ յետոյ  
ուրիշ առաջարկութիւն բերել : (Ընդմիջում  
Մէրեթմ-Գուլի էֆ . ի կողմէն . — Գուր Ե-  
րեսփոխանաց դատարարը չէք , դուք միայն  
ձեր կարծիքը յայտնեցէք) : Այո՛ , խնդրոյն  
խորը մտաք , եւ իրաւունք չունէիք : Տեա՛րք  
իմ , ես ալ շատ բան կրնամ խօսիլ այս նիւ-  
թին վրայ , ահա 40 թերթ ունիմ գրած զոր  
պիտի ներկայացնեմ եթէ խորը մտնելու կար-  
գը գայ . բայց տակաւին կարգն եկած չէ .  
ուստի կառաջարկեմ որ Յանձնաժողովին տե-  
ղեկագիրն ամբողջութեամբ քուէի դրուի .  
Տեղեկագրին եզրակացութիւնէն դուշակածս  
սա՛ է թէ Յանձնաժողովն անուշտ Ս . Պատ-  
րիարքին ու Քաղաքական ժողովին մէջ տիրած  
անհամաձայնութեան խորը թափանձներ ու  
անհրաժեշտ դատեր է անոնց հրաժարականն  
ընդունիլը . մէկ խօսքով հասկցեր է որ այս  
երկու մարմինները կարող չեն այլ եւս սահ-  
մանադրաբար իրենց պաշտօնը վարել :

Այս միջոցին ատենաբանը կ'ընդմիջուի  
Երեսփոխաններէն եւ ժողովին հանդարտու-  
թիւնը պահ մը կը խուովի , եւ Ատենապետ է-  
ֆէնտի քանի մը անգամ իր ազդարարու-  
թիւնը կրկնելէ ետեւ կսպանայ Ատենա  
գոցել որու վրայ աղմուկը կը վերջանայ եւ  
Ժողովն իւր հանդարտութիւնը վերստին գրա-  
նելէ ետեւ Ատենապետ էֆ . կը հրաւիրէ զՊէկ-  
եան էֆ . եզրակացնել իր առաջարկութիւնը :

ՊԵՅԵԱՆ Թ . էՖ . (Շարունակելով) —  
Տեա՛րք իմ , առաջարկեցի թէ Տեղեկագրին  
ամբողջութիւնը քուէի դրուի , աշխարհի օ-  
րէնքն այսպէս կը պահանջէ . Ընդհանուր ժո-  
ղովոյ վստահութեամբը պատուեալ Յանձնա-  
ժողովին առաջարկութիւնը պէտք է նախ  
քուէի դրուի , անկէ ետքը կուգան ուրիշ ա-  
ռաջարկութիւններ :

Տ . ՀՄԱՅԵԱԿ ՎԱՐԴ . եւ ԱՂԱԲԵԿԵԱՆ  
ՄԱՐԿՈՍ ԷՖ . — Ո՛չ , ո՛չ չըլլար :

Երեսփոխանաց մէջէն քանի մը ձայներ  
Մէրեթմ-Գուլի էֆէնտի առաջարկութեան  
համար քուէ կաշաղակեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Խօսքը Մազլըմեան  
էֆ . ինն է :

ՄԱԶԼԵՄԵԱՆ Տ . էՖ . — Մեր ազգային  
օրինաց համեմատ ընտրած եմք Սրբազան Պատ-  
րիարքը եւ Քաղաքական ժողովը . ասոնք ամենը  
մէկանց կը պարտաւորին օրէնքը գործադրել .  
բայց որովհետեւ արդէն քիչ շատ փորձերով  
համոզուած եմք որ մեր օրէնքը թերութիւն-  
ներ ունի ինչ ինչ կէտերու մէջ , այդ թերու-  
թիւնները բնեւէրու եւ սրբազրելու համար ալ  
Ընդհանուր ժողովս վերաբնելիլ Յանձնաժողով  
մը հաստատած է . Պատրիարքը եւ Վարչութիւն  
օրէնքին գործադրութեանը մէջ երբ դժուա-  
րութեան մը հանդիպին , պարտաւոր են դի-  
մել Ընդհանուր ժողովին , որպէս զի ժողովն  
ալ իր վերաբնելութեան սկզբունքովը նկատու-  
ղութեան առնով դժուարութեան կէտերը ,  
պէտք եղած օգտակար անօրէնութիւնն ընէ  
եւ ըստ այնմ գործադրել տայ իր պաշտօնէից :  
Հիմա Սրբազան Պատրիարքը կառարկէ թէ  
մեր Սահմանադրութիւնը թերութիւններ ու-  
նի , եւ թէ արդի վարչական կազմութեամբ չէ  
կարող իր պաշտօնը վարել եւ կը հրաժարի : Ս .  
Պատրիարքը չէ թէ անձերու դէմ կը գանդա-  
տի , այլ դրութեան դէմ . եւ թէ եւ իր փորձա-  
ուութեամբ գտած թերութիւնները վերաբնելիլ  
Յանձնաժողովին ալ ներկայացուցեր է , բայց  
ան ալ կերպով մը ետ է ձգեր : Երբ Պատրիարք  
մը Սահմանադրութեան ինչ ինչ տրամադրու-  
թեանց վրայ իր դիտողութիւնները կատարուի  
Ընդհանուր ժողովին ներկայացնել , իր փոր-  
ձաուութեամբը եւ խզճի վկայութեամբը անոնց  
անգործադրելի լինիլը յառաջ բերելով , Ընդ-  
հանուր ժողովն առանց ուշադրութեան առ-  
նելու նոյն դիտողութիւնները եւ առանց խնդ-  
րոց կարգն անցնելու եթէ միայն եւ պարզա-  
պէս Պատրիարքին հրաժարականն ընդունի ,  
ասով կը հաստատէ թէ ասկէց 40 տարի ա-  
ռաջ ուր որ է ինք , դեռ հոն ենք . կը նշանակէ  
այս թէ Պատրիարքի մը փորձաուութեան վրայ  
հիմնած դիտողութիւնները յարգել չենք ու-  
ղեր , եւ կապացուցանէ բոլոր աշխարհի առջև

թէ մենք խոհեմութեամբ վարուին ինչ է չը-  
գիտենք դեռ : Այն՛ յարգոյ պաշտօնակիցս որ  
ըսաւ թէ քաղաքակրթեալ աշխարհին օրէնքն է  
նախ Երեսփոխանական Յանձնաժողովոյ տեղե-  
կագրին եզրակացութիւնը քուէի դնել , իրա-  
ւունք ունի թէ եւ , բայց պէտք է գիտնալ թէ  
այդ տեղեկագրին մէջ հրաժարական ընդու-  
նելու կէտ կայ . տեղեկագիրը քուէի դնել հրա-  
ժարականն ընդունիլ ըսել է . յայտնի է թէ  
խնդիրն ինչ ձևերու վրայ կը դառնայ . ասանկ  
պարագայի մը մէջ անգղուութիւն ըրած կըլ-  
լանք Յանձնաժողովոյ տեղեկագիրը քուէի դնե-  
լով : Ընդհանուր ժողովոյ պարտքն է յայտա-  
բարել իր ընտրած Պատրիարքին եւ Վարչու-  
թեան թէ Սահմանադրութիւնը պիտի գոր-  
ծադրուի որքան կարելի է իր սկզբունքները  
յարգուելով , եւ երբ փորձաուութեամբ ինչ  
ինչ կէտերու վրայ դիտողութիւն ունենան  
կամ անգործադրելի կէտեր գտնեն , պէտք է  
զանոնք ժողովին բերեն նկատողութեան առ-  
նուելու համար : Ահա այս նպատակաւ կա-  
ռաջարկեմ որ Սրբազան Պատրիարքին Սահմա-  
նադրութեան վրայ ըրած դիտողութիւնը , որ  
ըստ ինքեան առաջարկութիւն մ'է , այն է  
Վարչական կազմակերպութեան խնդիրը ,  
այժմէն խնդրոց կարգն անցնի չէ թէ վերաբնե-  
նիլ Յանձնաժողովոյ դիտողութեանը յանձնելու  
համար , այլ ուղղակի Ընդհանուր ժողովոյս մէջ  
յուզելու համար . միւս կողմէ պատգամաւո-  
րութիւն մը երթայ ժողովոյս կողմէ Ս . Պատ-  
րիարքին առաջարկելու որ իր հրաժարականն  
ետ առնու Սահմանադրութիւնը գործադրելու  
պայմանաւ , եւ այն թէութեամբ որ եթէ դժ-  
ուարագործադրելի կէտ մը գտնէ , ուղղակի  
Ընդհանուր ժողովին բերէ վերաբնելութեան  
համար : Երբ Ս . Պատրիարքն Ընդհանուր ժո-  
ղովոյ այս առաջարկութիւնը չընդունի եւ իր  
հրաժարականն ետ չառնէ , այն ատեն հրա-  
ժարականն օրինաւորապէս ընդունուած կըլ-  
լայ Ընդհանուր ժողովն եւ հարկ եղածը կը  
անօրինուի :

Տ . ՀՄԱՅԵԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ — Իմ յարգոյ  
պաշտօնակից Մազլըմեան էֆ . ի իրաւացի խոր-  
հրածութեանցն ըստ ամենայնի համամիտ եմ եւ  
նորա առաջարկութիւնը կը կրկնեմ . պէտք է

որ այս Ընդհանուր ժողովն ինչպէս որ ասկէ  
գրեթէ 4 տարի առաջ , 1869 Սեպտեմբեր 4ին  
ընդհանուր քուէարկութեամբ զԵրիմեան Սըր-  
բազան ընտրեց ի Պատրիարքութիւն , նոյնպէս  
իւր հրաժարականն ետ առնել տալու համար  
Քննիչ Յանձնաժողովոյ կոտորած բանակցու-  
թիւնը բուսական չհամարի , այլ իր կողմէն  
յատուկ պատգամաւորութիւն մը ուղարկելով  
ըստ Մազլըմեան էֆ . ի առաջարկութեան ,  
ուղղակի բանակցի նորին Սրբազնութեան նեո  
իւր հրաժարականը յետս կոչել տալու համար ,  
Այս առաջարկութիւնը քաւ լիցի որ Քննիչ  
Յանձնաժողովոյ դէմ անվստահութեան ցոյց մը  
ըլլալու նպատակաւ կը կրկնեմ , ինչպէս ոմանք  
կարծել տալ փորձեցին :

ԻԹԻԻՃԵԱՆ Կ . էՖ . — Խօսք աննելուս  
նպատակը Մէրեթմ-Գուլի էֆ . ի առաջար-  
կութիւնը կրկնել է յաւելումով կամ բացատ-  
րութեամբ : Ըստ որում խնդիրը Քննիչ Յան-  
նաժողովոյ բերած Տեղեկագրին եզրակացու-  
թեան վրայ է , եւ այն ուրիշ բան չէ բայց ե-  
թէ Յանձնաժողովն առանց Ընդհանուր ժո-  
ղովն պաշտօն ունենալու ինքնաբերաբար եւ  
բարի զիտաւորութեամբ Ս . Պատրիարքին  
միտքը հասկնալ ուղղով զայցեր բանակցեր է  
իւր նեո եւ տեսնելով որ անհար է հրաժա-  
րականն ետ առնել տալ , Ընդհանուր ժո-  
ղովն ալ կառաջարկէ որ հրաժարականն ը-  
դունուի . ուստի շատ կաշի է որ Սրբազան  
Պատրիարքն այդ առաջարկութեան անպաշտօն  
եզանակաւ մատուցուած ըլլալուն համար չէ  
հանդուած իր հրաժարականն ետ առնուլ . այս  
նկատողութեամբ իրաւացի կը գտնեմ Մէրեթմ-  
Գուլի էֆ . ի առաջարկութիւնը թէ պէտք է  
անգամ մ'ալ Ընդհանուր ժողովը բանակցի  
պաշտօնական կերպով նորին Սրբազնութեան  
նեո իւր հրաժարականն ետ առնել տալու հա-  
մար : Նմանապէս շատ իրաւացի է Մազլըմեան  
էֆ . ի այն առաջարկութիւնն ալ թէ ըստ ո-  
րում Պատրիարք մը կ'ը 4 տարուան պաշտօնա-  
վարութեան փորձաուութեամբ դիտողութիւն-  
ներ կը ներկայացնէ Սահմանադրութեան ինչ  
ինչ կէտերու նկատմամբ , Ընդհանուր ժողովոյ  
պարտքն է ուշադրութեան առնուլ նոյն դի-  
տողութիւնները : Աւստի պէտք է որ Սրբազան  
Պատրիարք չօր հրաժարականն ետ առնել տա-

լու առաջարկութիւնն իր դիտողութիւններն ալ նկատողութիւնն առնելու պայմանաւ եղած լինի :

ՊԵՆԵԱՆ թ . էՖ . — Պատգամաւորութիւն զրկելու առաջարկութեան դէմ խօսք ունիմ :

ԲԱՐՁՐ ԶԱՅՆԵՐ . — Բուէ , քուէ :

ՊԵՆՍԱՆ թ . էՖ . — Պատրիարքն ամբաստանութեան տակ է :

ԱՂՄԿԱԼԻՅ ԶԱՅՆԵՐ . — Ոչ , ամբաստանութիւն չկայ Պատրիարքին դէմ . զրպարտութիւն են եղած խօսքերը :

Այս միջոցին ազմուկը կընդարձակի , զոր Ատենապետ էՖ . հազիւ կը հանդարտեցնէ :

ՕՏԵԱՆ Ք . էՖ . — Քննիչ Յանձնաժողովս իր տեղեկագրին մէջ յայտնեց թէ Ս . Պատրիարքին քով փորձ մը ըրած էր հրաժարականն ետ առնելու համար եւ չէր յաջողած . հիմա կարծիք յայտնողներ եղան թէ Ս . Պատրիարքը զիտնալով որ Յանձնաժողովը պաշտոն չունէր իր հրաժարականն ետ առնել տալու , անոր համար թերեւս ետ առնել չէ ուզած : Միւս կողմէ Մազլըմեան էՖ . առաջարկեց որ Ս . Պատրիարք չօր Սահմանադրութեան ինչ ինչ կէտերու մասին ըրած դիտողութիւնը խնդրոց կարգն անցնի : Յանձնաժողովս ալ արդէն զայդ առաջարկած է իւր տեղեկագրին մէջ : Արեւմն եթէ այդ իմաստով , այսինքն ոչ թէ Յանձնաժողովիս ըրած յայտարարութեան անխտահարութեամբ , այլ յանուն Ընդհանուր ժողովին ալ փորձ մը լինելու նպատակաւ , պատգամաւորութիւն մը զրկել որոշուի առ Սրբազան Պատրիարքն , այդ պատիւ մը ընել է Նորին Սրբապետութեան , որու Յանձնաժողովս չը հակառակիր :

Ատենապետ էՖէնտին քու էի կը դնէ պատգամաւորութեան առաջարկութիւնը , որ մեծախանութեա իր կընդունուի :

Պէկեան էՖէնտին կը բողոքէ , ճնշման ներքեւ քու էի դրուեցաւ , էր-ժողովն առձանազրկեց ըսելով :

ՄԱՋԼՇՄԵԱՆ էՖ . — Ես ալ կը բողոքեմ ոչ թէ հրաժարականիդ , այլ ցուցեցած պատճառիդ դէմ :

Ատենապետ էՖէնտին պատգամաւորութեան համար կառաջարկէ ,

Տ . Խորէն Նպիսկոպոս եւ Օտեան էՖ . Քննիչ Յանձնաժողովոյ անդամներէն — որք կընդունին ,

Տ . Նիկողայոս Նպիսկոպոս — որ կը մերժէ Սահմանադրութեան Վերաքննիչ Յանձնաժողովոյ նախագահն ըլլալուն , եւ յիշեալ Յանձնաժողովն արդէն Սրբազան Պատրիարքին առաջարկութեան ստիպողականութիւնը մերժած ըլլալուն պատճառաւ : Որու տեղը կառաջարկէ Ատենապետ էՖ .

Տ . Հմալեակ Վարդայ . որ կընդունի .  
Ռուսինեան էՖէնտի » »  
Կոստանդեան Յակոբ էՖ . » »

Եւ Երեսփոխանաց ոմանց առաջարկութեամբը ժողովը վերոյիշեալ Երեսփոխանաց վրայ կը յաւելու նաեւ Մազլըմեան եւ Մէրեւմ Գուլի էՖէնտիները , որք միանալով իրենց առաջարկութիւնը կը խմբագրեն եւ ստորագրութեամբ զիւանին կը յանձնեն , որն որ ժողովին հաղորդելէ ետեւ , զիւանը Պատգամաւորաց կը յանձնէ զայն , որու օրինակն է .

«Սրբազան Պատրիարքին վարչական կազմութեան վերաբերող դիտողութիւնը , խընդրոց կարգին մէջ անցնելէ ետեւ , առաջարկել Ս . Պատրիարքին , որպէս զի ներկայ Սահմանադրութիւնը դորձադրելու թէութեամբ իւր հրաժարականն ետ առնու , այն պայմանաւ որ եթէ ունենայ դժուարագործադրելի կէտեր , «Ընդհանուր ժողովին բերէ զանոնք անմիջապէս վերաքննելու համար : »

(Ստորագրողներն)

Յ . ՄԷՐԵՎՄ—ԳՈՒԼԻ Յ . ՄԱՋԼՇՄԵԱՆ

Ընդհանուր ժողովոյ պատգամաւորութիւնը զիւանին հետ ընկերակցութեամբ կը ներկայանայ Սրբազան Պատրիարք չօր յերաստեմայ տունն , եւ պահ մը ետեւ վերադառ-

նալով , Ատենապետ էՖ . ժողովին կը հաղորդէ պատգամաւորութեան արդիւնքը եւ կը յայտարարէ թէ Ս . Պատրիարքը ժողովոյն առաջարկած պայմանաւ իւր հրաժարականն ետ առած է :

(Ուժգին ծափահարութիւն Երեսփոխանաց եւ ժողովրդեան կողմանէ , կեցցէ Խրիմեան , կեցցէն Երեսփոխանք , եւ կեցցէ Ատենապետ աղաղակներով) :

Ատենապետ էՖ . ատենը կը փակէ յա-

ւելցնելով թէ Քաղաքական ժողովոյ հրաժարման խնդրոյն անօրէնութիւնը կը մնայ յաջորդ նիստին :

Ատենը կը գոցուի ժամ 11 ը քառորդ անցնելով :

Երեսփոխանք Երեսփոխանք ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՅԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ . ՏԱՏԵԱՆ





In der ersten Hälfte des Jahres 1811  
 wurde die Zahl der Einwohner  
 in der Stadt um 1500 Personen  
 vermehrt. Die Ursache davon  
 ist die Anwesenheit der  
 russischen Truppen, welche  
 seit dem Jahre 1807 in  
 der Stadt verbleiben.



This page is mostly blank with faint, illegible markings and bleed-through from the reverse side of the paper. There are some very light, ghostly impressions of text visible, but they are not readable.

ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԼՏՈՒԿԻՆ

Կը ծախուի 'ի Գիւ. անտառան Պատրիարքարանի, և կը գտնուի  
ամեն գրադարանաց քով և Եկեղեցեաց բանկաները :